Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4533

P.99-8
S-45
1883

2010 -

491.5Ա2-81
ՂՏ-68

Ն. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

1553

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՅԲԲԵԹԱՐԱՆ

ԵՒ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գին 1 ռուբ.
$ 2002

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵՏՆ ՓՈՂՈՑ, 5
1883

491.99-8
Տ-45
19951-59
(1008/36048)

Ն. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՅԲԲԵԹԱՐԱՆ

ԵՒ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5
1883

36808 սահ.

Дозволено цензурою. Тифлисъ. 26 Августа, 1883 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 5.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սկսելով Մայրենի Լեզուի ---ջին ---դ տասնեկրորդ տպագրութիւնը, մենք կարևոր ենք համարում մի երկու առաջնորդող խօսք նուիրել սորան։ Ուսուցիչները, որոնք գործ են ածել մեր գրքոյկը, գիտեն ասղէն, որ դա լոկ տառագիտութիւն չի սովորեցնում, այլ լեզուի ուսուցումը բարոյակրթութեան և իրազեկութեան հետ կցելով, առաջնորդում է մանուկներին դէպի գիտակից նախաձանութիւն շրջապատող աշխարհին։—Նոյն իսկ գրքի սկզբից առաջարկած նիւթը երեք աստիճանների է բաժանվում։

Ա. Իւրաքանչիւր տուած ---դ-ի վերայ ուսուցիչն աշխատում է մի յարմարաւոր բարոյակրթական (կամ ինչպէս սովորութիւն է դարձել անուանել—բարոյախօսական) դաս սպասել՝ մանուկներին ընտանի և հասկանալի ոճով։ Բարոյակրթական դասերի ժամանակ ուսուցչի գլխաւոր նպատակը և ուշադրութիւնը պէտք է դարձրած լինի աշակերտի կապակից խօսելու և կանոնաւորապէս դատելու վերայ, եթէ չը յիշենք այն բարոյական—խրատական օգուտները, որ առանց ուսուցչի աշխատութեան և պիտի իւրացնէ մանուկը։

Առաջին անգամի համար մենք առաջարկում ենք հետևեալ բարոյակրթական առակները՝ ուսուցչին, ի հարկէ, լիակատար իրաւունք տալով փոխարինել դոցա աւելի յարմարաւորներով, եթէ ունի. I «Ագահ շուն», II «Կատու», III «Բազը և ագռաւը», IV «Հաւը և վառիկները» V «Ոսկի», VI, VII «Զին և էշը», VIII «Մեղուն», IX, X «Ցորեն և գարի», XI «Ոչխար», XII «Գիւղացին և օձը «XIII «Ծառերն և կացինը», XIV «Փիղ» և XV «Փամփոյց»։

Այս բարոյակրթական առակները, ուսուցիչների դիւ-

րութեան և այբբենարանական վարժութիւններից յետոյ կարդացնել տալու համար, զետեղում ենք դասագրքիս մէջ։

Բ. Բարոյակրթական դասից յետոյ ուսուցիչը պիտի անցնի առարկայի զննութեանը՝ այն ձևով, ինչպէս ցոյց է տուած մեր «Բացատրական Ձեռնարկի» մէջ։ Նախընթաց դասի մէջ նա ուշադրութիւն էր դարձնում աշակերտների խօսելու ընդունակութիւնը զարգացնելուն, իսկ այստեղ նորա նպատակը պիտի լինի մանկան զննելու ընդունակութիւնը զարգացնել. այնտեղ աշակերտը պատմում էր, այստեղ քննում է. այնտեղ նա դատում էր, այստեղ հետազօտում է. այնտեղ գործ ունէինք գլխաւորապէս նորա երևակայութեան, իսկ այստեղ— խելքի հետ։ Այս երկրորդ կարգի վարժութեան չափը և աւանդելու եղանակը մանրամասն բացադրած լինելով մեր Ուսուցչական Ձեռնարկի մէջ, դասատուների ուշադրութիւնը դէպի նա ենք հրաւիրում. իսկ իւրաքանչիւր զննելի և վերլուծելի առարկայի վերայ բարոյակրթական պատմութիւններ պատմելու կարևորութեան վերայ ոչ մի խօսք ասած չլինելով յիշեալ ձեռնարկի մէջ, մենք կրկին անգամ հրաւիրում ենք դէպի սա մեր ուսուցիչների լուրջ ուշադրութիւնը։ Այն բարոյակրթական պատմութիւնները, որ ուսուցիչներն իրանք պիտի կազմեն կամ քաղեն զանազան աղբիւրներից, պէտք է յարմար լինին աշակերտների մտաւոր կարողութեանը, և հետաքրքիր լինելուց զատ, անբովանդակ ևս չ՚պէտք է լինին շատ առակների և հեքիաթների պէս։

Գ. Իրը զննելուց յետոյ՝ ուսուցիչն անցնում է բառի վերլուծութեանն այն եղնակով, որ բացադրած է ուսուցչաց ձեռնարկի մէջ։

Արդեօք հարկաւոր է այստեղ կրկնել այն, ինչ որ մենք ասել ենք մի անգամ բառերը վերլուծելու մասին։ Առաջին դասերի ժամանակ մենք բառը վանկերի չենք բաժանում, այլ ուղղակի հնչիւնների, այն ամենապարզ պատճառով, որ բառերի իսկական տարրերը վանկերը չեն, այլ հնչիւնները։

Եւ որովհետև մեր այբբենարանի մէջ վերլուծութեան առաջարկած բառերը միավանկ են կամ երկավանկ, ուստի և դժուար չէ նոցա ուղղակի հնչիւնների վերածել և ապա հնչիւններից ուղղակի բառեր կազմել։ Այդ վերլուծութեան ժամանակ աշակերտները զանազանում են հնչիւնների տեսակները և առանց դժուարութեան հասկանում են, որ ձայնաւոր հնչիւնների վերայ ձայնը երկարում և փոքր ինչ հանգիստ է առնում։ Գրքի նախապատրաստական մասն անցնելուց յետոյ միայն՝ ուսուցիչն սկսում է գաղափար տալ վանկերի մասին. այդ նպատակով են կազմուած գրքի առաջին դասերը (1—4)։ Այսպիսով միավանկ, երկավանկ և բազմավանկ բառերը հասկացնելուց յետոյ, հետևեալ դասերի ժամանակ (5—7) ուսուցիչը հասկացնում է աշակերտներին բառի և մտքի (նախադասութեան) մէջ եղած խոյոր տարբերութիւնը, առաջարկելով նախադասութիւններ նախ երկու բառից կազմուած (անուն և գործողութիւն) և ապա երեք (գլխաւոր առարկայ, գործողութիւն և երկրորդական առարկայ)։ Ութերորդ վարժութիւնը նուիրում է անունների տեսակները հասկացնելուն, ինչպէս չորրորդ դասը նուիրուած էր նուազական—քնքուշական մասնիկների մասին գաղափար տալուն։ Այնուհետև միւս դասերի ժամանակ այդ վարժութիւններն ընդարձակվում և լրանում են։

Ուրեմն մեր առաջարկած եղանակի մէջ մենք հետևում ենք այն սիստեմային, որ սիստեմային կը հետևէր ամենայն փորձառու վարպետ, երբ կամենար իւր աշակերտին հասկացնել թէ ինչից և ինչպէս է շինվում տունը։ Իւր նպատակին հասնելու համար, Ճշմարիտ, նա կարող էր քանդել տունը և մէկիկ մէկիկ ցոյց տալ նորա բաղադրիչ մասերը՝ աղիւս, ցեխ, երկաթ և այլն, բայց աւելի նպատակայարմար կը լինէր ժողովել այդ նիւթերը (ինչպէս մենք ժողովում ենք հնչիւնները զանազան բառերից) և ապա կառուցանել չէնքը,—նախ հիմքը, հիմքի վերայ պատերը, առաստաղը և այլն (ինչպէս մենք կազմում ենք նախ բառեր, յետոյ այլևայլ ձևի և ընդարձակութեան նախադասութիւն-

ներ)։ Այս ասելով մենք չենք հերքում այն եղանակի արժանաւորութիւնը, որ առաջարկում է նախ յօդուածը նախադասութիւնների բաժանել, ցոյց տալով նախադասութեան տեսակները, ապա նախադասութիւնը բառերի, բառերը վանկերի և վանկերը հնչիւնների, բայց և չենք կամենում թագցնել, որ այդ եղանակն ասելի բարդ է և ճանապարհն ուղղակի հեշտից դէպի դժուարը չ՚տանող։ Այսու ամենայնիւ ուսուցիչը եթէ սիրահար է այդ եղանակին, ամենևին դժուարութիւն չի գտնել պատուատել նորան մեր գրքի վերայ. հարկաւոր է միայն առարկայի վերայ պատմած բարոյականութիւնը իւր ցանկութեան համեմատ վերլուծել։

Այս ընդհանուր դիտողութիւններն անելուց յետոյ՝ մեզ կը մնայ աւելացնել, որ այս անպատրաստեան ժամանակ գրքի մէջ աւելացրինք մի քանի բանաստեղծական և բարոյականական նիւթեր։ Բաւականին առատ նիւթ առաջարկելով՝ մենք մեջտեղ ենք տալիս մեր վարժապետներին, եթէ կը ցանկանան, խոհեմութեամբ ընտրութիւն անել, իրանց աշակերտների հասկացողութեան և տեղական պահանջներին համեմատ։—Բոլոր առաջարկած նիւթերը միևնոյն տեղի համար պարտաւորական չեն կարող լինել։

Մոռանում։ — Մայրենի Լեզուի բացատրական Ձեռնարկը սորանից հինգ—վեց տարի առաջ տպագրուած լինելով՝ չի կարող լիակատար կերպով առաջնորդել ցանկացողներին մեր դասագրքով պարապելու համար. նորա մէջ կան շատ տպագրական պակասութիւններ և շատ բան էլ այս գրքում մենք փոփոխել ու լրացրել ենք, որոնց մասին այնտեղ ոչ մի խօսք չի ասուած։ Այս պակասութիւնը լրացնելու համար՝ մենք կ՚աշխատենք, եթէ մեջտեղ ունենանք, առանձին տետրակով նորից հրատարակել «Մայրենի լեզուի» առաջին տարուայ բանալին։ Առ այժմ Ա Ր Լ Ա Բ Ա Ր կը բաժանենք արդէն եղած օրինակները, երաւունք տալով քսանից աւելի գնող ուսումնարաններին և գրավաճառներին ստանալ մի մի օրինակ «բացատրական Ձեռնարկ։»

Պատմեցէք Ձէ՞ ինչ է նկարած այս պատկերի վերայ։

ԱՌԱՐԿԱՆԵՐ՝ ՋՆՆԵԼՈՒ ԵՒ ԲԱՌԵՐ՝ ՎԵՐԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ *)։

շուն

ու, ն, շ,—ուշ, նուշ, ուշ ու նուշ։

կատու

ա, ու, կ, տ, շ, ն։—ակ, կա. նա, նուշ,

*) Դասատուության եղանակի մասին կարդա յառաջաբանը և բացատրական ձեռնարկը։

շուն, կուտ, տակ, տաշ, տուն, տան, տատ, անուն, անուշ, աշուն, շուշան։

բադ

ա, ու, բ, դ, կ, տ, շ, ն։—դա, դու, բու, բուն, բան, բաշ, բակ, տակ, դատ, դանակ, բանակ։

հաւ

ա, ու, հ, ւ, բ, դ, կ, տ, շ, ն։—նա, նաւ, կաւ, բաւ, դաւ, բահ, ահ, շահ, հուն, հունդ, հատ, հակ, հաւատ, հաւան, նաւակ։

Ը, Հ, Ի, Բ, Դ, Կ, Տ, Ճ, Ն,—Բան, Բաղ, Ճուն, Կաւ, Հաւ, Տուն, Նուշ, Ակ, Նաւ, Տակ, Դատ. Բաղ:

Էշ-Էշը

ա, ու, է, ը, Ի, Ը—Ինդ, էն, կէտ, շէկ, շուն — շունը. նուշ — նուշը. բաղ—բաղը. հաւ—հաւը. բահ—բահը. նաւակը. դանակը:

Մեղու

ա, ու, է, ը, ե, մ, ղ, Ի, Մ, Ղ:—Ինդ, եկ, էն, եւ, եմ, մեղ, նեղ, աղ, մաղ, մատ, կաղ, մուկ, մէկ, ուղտ, աղուն, ուղեղ, Մուշեղ:

աւազ

ա, ու, է, ե, ը, մ, ղ, զ, Ջ:—Ինդ, եղ, մեղ, մեզ, մաղ, մաղ, կաղ, կաղ, կուզ, կոզ, աւազ, աւազ, զաւակ, ընկուզ, ազատ, աղուն:

ոսկի

ա, ու, է, ե, ը, ի, ո, ս, Ո, Ի, Ս:—Ինս, էս, եզ, էզ, են, էն, ոտ, ոատ, սա, սուտ, ուս, սուս, սեկ, կէս, կէտ, սակ, տիկ, տես, դաս, մի, իմ, միս, մաս, կաշի, կաղեն, Ոսկան, ոստիկ, Սահակ, սղեղ, սաեղ, հասակ, զատիկ, Խահակ, իմաստուն, Խակուտի:

—

ու=ո, ւ. և=ե, ւ. եա

—

Ու—և, սենեակ, տաանեակ
Սու—սև, մանեակ, աղաանեակ

—

ա, ու, է, ե, ի, ո, ը, ս, մ, ղ, հ, ւ, ը, ղ, կ, տ, զ, շ, ն, և, եա:
Ա, Է, Ե, Ի, Ո, Ը, Ս, Մ, Ղ, Հ, Ի, Բ, Դ, Կ, Տ, Զ, Շ, Ն:

ԴԱՍԵՐ

1.

Կուտ	Բակ	Կազ	Սան
Նուշ	Բու	Մաշ	Ոտ
Հուն	Ժոն	Նետ	Ոստ
Տուն	Բադ	Մատ	Էշ
Նա	Բան	Կէտ	Կին
Նաւ	Դա	Մուկ	Ուղտ
Կաւ	Դու	Մազ	Դաս
Տակ	Դաս	Տեղ	Դէզ
Կէս	Եղ	Տաղ	Եզ
Տիկ	Աղ	Սա	Սէզ

2.

Կատու	Ոսկի	Ժասակ	Մոսէս
Դանակ	Ոսկան	Աւազ	Սենեակ
Սամի	Սամսոն	Զաւակ	Բամբակ
Անուշ	Սահնակ	Անուշ	Կաղին
Ուղեղ	Աղուէս	Աշոտ	Մեղու
Անուն	Կաշի	Մուշեղ	Կոտեմ
Ժաւատ	Դաբաղ	Ասեղ	Հուշան
Աղեղ	Համամ	Ժամեմ	Ղուկաս

Զատիկ	Մանեակ	Նաւակ	Մողէս
Սմբատ	Կաղամբ	Աղուն	Տիկին
Տասնեակ	Ուղեղ	Ոզնի	Եղան

3.

Հուշանիկ	Ընտանի	Աւազան
Անուշիկ	Ընտեղէն	Ուղեղիկ
Նշանակ	Աւետիս	Կոստանդին
Աւազակ	Սմբակում	Սմասիա
Բաւական	Սիսական	Աւազման
Բանական	Ժաւաբուն	Անուշաւան

4.

Հուն—հնիկ	Էշ—իշուկ
Անուշ—անուշիկ	Սկունդ—սկնդուկ
Հուշան—Հուշանիկ	Տուն—տնակ
Աստղ—աստղիկ	Բուն—բնակ
Սան—սանիկ	Նաւ—նաւակ
Մանուկ—մանկիկ	Աղաւնի—աղաւնեակ
Ոստ—ոստիկ	Ոսկի—ոսկեակ

5.

Ձոնը հանում է։ Սմբատը տեսնում է։
Մաղը մաղում է։ Սահակը սահում է։
Շուշանը բուսնում է։ Մոսէսը տեսնում է։
Մողէսը սողում է։ Ընուշը մանում է։
Ղուկասը շինում է։ Տունն ընկնում է։
Սիսակը ուտում է։ Ցաւակը տանում է։

6.

Կատուն կ'ուտէ Սմբատն եկաւ։
Բամբակը կը բուսնի Ոսկանը տեսաւ։
Սիմոնը կը տանէ Ձոնը հասաւ։
Ձոնը կը հանի Բամբակը բուսաւ։
Տունը կը շինուի Ընուշը մնաւ։

7.

Կատուն ուտում է մուկը։
Ձաւը տեսաւ կուտ։
Սմբատն ունի մատիտ։
Շունն ուտում է միս։

Շուշանիկն ունի շնիկ։
Ընուշն ունի տիկին։
Ղուկասը կ'ասէ դասը։
Սամսոնն ունի դանակ։
Բադն ուտում է կուտ։
Աշակը կը տանէ աւազ։
Սիմոնն ունի շամամ։
Ցաւակս ունի շամամիկ։
Աշոտը կ'ուտէ մաշ։

8, *)

Շուշանիկ. Մինաս. Կոստանդին. Ընուշ. Սիսակ. Սմբատ. Մուղէշ. Տիտոս. Ղուկաս. Ոսկան. Իսահակ. Բաղէշ. Դատ. Նշան. Ձուանակ։

Շուն, էշ, կատու, ուղտ, եզը, եղնիկ, մուկը, կէտ, կուզը...

Ձաւ, բադ, բու...

Մեղու, բզէզ...

Կաղամբ, համեմ, կոտեմ, շուշան, շողգամ, բամբակ...

Ձող, աղ, աւազ, ոսկի, մնդիկ, կաւ...։

*) Տարբեր անուններ—յատուկ և հասարակ—նոցա ուղղագրութիւնը։

Պատմեցէ՛ք թէ ինչ է նկարուած այս պատկերի վերայ։

9. ՅՈՐԵՆ։ ՅԻՇ։ ՐՍ։

Հաց	Յեց	Յուցակ	Ասեղ
Յին	Յանկ	Կարաս	Կերակուր
Սուր	Կացին	Կորեկ	Կարկատան
Սար	Կարկուտ	Դարբին	Արտուտիկ
Կիր	Յերեկ	Խարտի	Արաբացի
Յաւ	Յողուն	Հացի	Դաշտեցի
Հոր	Կարմիր	Մկրատ	Դատաւոր

Սուրէն ունէր կարմիր մատիտ։
Յորենն ունի բարակ արմատներ։
Կաղնին ունի հաստ բուն։
Աշակերտն ստացաւ դեղին մատիտ։
Ես ունիմ սուր դանակ։
Հուշանն ունի բարակ ասեղ։



10. գարի՝-գ, Գ՝

Գիր	Մերգ	Կարգ	Մանգաղ
Գունդ	Բակ	Գեղին	Գաւազան
Սագ	Գարի	Գրիգոր	Էզգական
Մարդ	Գարուն	Գարեգին	Գեղեցիկ

Հաւն ուտում է հատիկներ բակում:
Երգուսը երգում է իր երգը դաշտում:
Գարբինը շինում էր կացին դարբնոցում:
Ես կարդում եմ դասս ուսումնարանում:
Գարին ու ցորենը բուսնում են արտերում:

—

Սագ . . . Սագեր 1) Ցորեն . . . Ցորեններ
Մարդ . . . Մարդեր . Գարի . . . Գարիներ

1) Այս և սրա նման վարժութիւններն աշակերտները գրաֆ-զրում են նախ բերանացի և ապա, կրկնութեան ժամանակը, գրաւոր: Հարկաւոր դիպուածներում ուսուցիչն ընդարձակում է գործնց, շատ անգամ նոյն իսկ աշակերտների միջոցով:

Նաւ . . . ՝
Մաղ . . . ՝
Բակ . . . ՝
Շոր . . . ՝
Ուղտ. . . ՝
Մազ . . . ՝

Մկրատ . . . ՝
Կարաս . . . ՝
Կացին . . . ՝
Արտուտ . . . ՝
Գոմէշ . . . ՝
Գաւազան. . . ՝



19951-59
1008
(360448)

11. կով՝-վ, Վ՝

Վ՝ար	Կաւ	Ջով	Աւազ	Որդի
Վ՝ատ	Սեւ	Սով	Ջաւակ	Ոսկի
Վ՝արդ	Թիւ	Բով	Նաւակ	Ոգնի
Վ՝ուշ	Ջաւ	Կով	Աւագ	Ոստիկ

—

Կովեր... կով
Վ՝արդեր...
Ջացեր...
Ջաւեր...
Նաւեր...
Ցովեր...

Վ՝անդակներ...
Ջաւակներ...
Աւազաններ...
Վ՝երարկուներ...
Ոսկիներ...
Ոգնիներ...

Գարեգինը և Վարդանը գրում են իրանց դասերը։—Յորենը և գարին հասնում են արտերումը։—Գոմէշը և կովը ընտանի կենդանիներ են.—Դագրատը և Վարդանուշը բարեսիրտ մանուկներ են։—Զարուհին և Տիգրանուհին շարունակ աշխատում են։

12.

ոչ խաբ։—չ Զ։ խ, Խ։

Խաչ	Խունկ	Խմոր	Զամիչ
Խոզ	Խակ	Գրիչ	Խազող
Խոտ	Հունչ	Խրատ	Տախտակ
Սոխ	Սեխ	Խաշխաշ	Մոխիր

Դու վերցրիր իմ գրչահատը։
Խաչատուրը վերցրեց Յորենի գրիչը։
Վարդանուշը գնաց իրանց տուն։
Դու կը գնես Հարևանի հաւը։
Աշակերտներն ունին շատ գրիչներ։
Ես ունիմ երկու մատիտ։
Ձովիան ունի հազար ոչխար։

Ո՞վ է խարդուտ դասը . . . . Ո՞վ է հիս ուտում . . . . .
Ո՞վ է խարդոյնում . . . . Ո՞վ է խոտ ուտում . . . .
Ո՞վ է գրում գրչով . . . . Ո՞վ է տրեխ ուտում . . . .
Ո՞վ է խրում շրջը . . . . Ո՞վ է ոզոց . . . . . .
Ո՞վ է խրատ ուսանողներ . . Ո՞վ է շուտ ներչում . . . . .

13. Օձ։ օ, Օ։ ձ, Ձ։

Օղ Ձուկ Երօր Խարձ

Օր	Գանձ	Աբօտ	Գօտիկ
Զի	Տանձ	Զիաւոր	Կօշիկ
Զու	Մօտ	Զմերուկ	Դեղձանիկ
Զոր	Զաղ	Խնձոր	Ձամբարձում

Օձը սողում է. Նա ոտներ չունի:
Դեղձանիկը երգում էր իր երգը:
Լաւօր ես գնացի ընկերիս մօտ:
Նա իր դասը սովորում էր տանձենու տակ:
Ձամբարձումը գնաց տանձ ու խնձորի:
Դաշտումը վար էին անում արօրով:

Օձը սողում է, իսկ յո՞ւմը . . .
Զին աչքում է, իսկ դեղձանի՞նը . . .
Գորգը յատակում է, իսկ շո՞ւնը . . :
Աշխէրքը կարդում է, իսկ ուսուցի՞չը . . .

14. կաթ։—թ, թ։

Կաթ	Թուխ	Թումբ	Թութակ
Թան	Թոկ	Թուզ	Թագաւոր
Թաթ	Թուշ	Երկաթ	Թանկագին

Ոչխարից ու կովից կաթն են կթում:
Մեր դրացին ունի մէկ թութակ:

Թորոսը երէկ թուզն էր բերում:
Թուզը հանում է աշնանը:
Վահանը թութը շատ է սիրում:

Կովը խոտ է ուտում, իսկ կաթո՞ւ . . .
Աշխատասէր աշակերտը կարդում է, իսկ . . .
Կացնով կտրում էս, իսկ սղոցո՞վ . . .
Դանակով մորուս է, իսկ ասեղո՞վ . . .
Կաթը խմում էս, իսկ հո՞յը . . .

15. Ջուր։—Ջ, ջ։

Երջ	Ջահ	Ջրհոր	Ջրաբեր
Էջ	Գաջ	Էկանջ	Ջրաղաց
Ջան	Ջորի	Ջնդան	Գարեջուր։

Երջը ընակվում է հանդերում. Նա ուտում է միս և ուրիշ բաներ։—Մեր եկեղեցում կան ջահեր։—Ջանիկը գնեց երկու ջորի։ Ջորին շատ օգտակար կենդանի է։ Ընջուր տեղերում ոչինչ չի բուսնում։

16.

ծառ։—ծ, Ծ, ռ, Ռ։

Ծով	Կուրծք	Ծարաւ	Սոխակ
Ծիծ	Ծեծ	Աշուխ	Առուակ
Ծուռ	Ծունկ	Արծիւ	Առուտուր
Գառ	Ծիրան	Ծիծեռնակ	Ծիաձան

Ծիծեռնակը, արտուտը և սոխակը ձմեռը գնում են տաք երկիրներ։—Արծիւը գիշատող թռչուն է. նա շատ բարձր է թռչում և մեծ մեծ ծառերի կատարներին իրան համար բուն է շինում։—Ձմեռը շատ թռչուններ հեռանում են մեր երկրից, իսկ գարնանը վերադառնում են մեր կողմերը։

17. ապակի։—պ, Պ։

Սեպ	Աղբուստ	Պատ	Կոպիտ
Կապ	Կապիկ	Պաս	Պանդոկ
Պանիր	Պետրոս	Պարապ	Կարագ

Պանիրը շինում են կաթնից. նա օգտակար ուտեստ է։—Պետրոսը կոտրեց իրանց հարևանի ապակիները. նա անկարգ մանուկ է։—Ծիտը չի գնում ուրիշ երկիրներ. նա ձմերող թռչուն է։—Ծիծեռնակը չի մնում մեր երկրումը. նա տարագնաց թռչուն է։

Ինչի՞ց են շինում չամիչը . . .
Ինչի՞ց են շինում ածուխը . . .
Ինչի՞ց են շինում գրիչը . . .
Ինչի՞ց են շինում մկրատն ու դանակը . . .
Ո՞րտեղ են քու
անում յորդանն ու գորին . . .
Ո՞րտեղ են քուանում յմերուէն ու ալիքը . . .
Ո՞րտեղ են քուանում կոպեկն ու համբը . . .

18. ճանճ։—ճ, Ճ։

Ճիւռ Մաճ Ճակատ Ոչանգակ

Ճար Ճանկ Ծամեր Ճակնդեղ
Կարճ Խիզճ Ջուրթակ Ճօճանակ
Ճօճ Կարիճ Ճախարակ Ճանապարհ

Ճանճը, մոծակը, բզէզը և թիթեռը մարդուս ոչինչ օգուտ չեն հասցնում։ Ճանճերը, մոծակները, բզէզները և թիթեռները ձմեռը սատկում են. աշնանը նրանց ձուերից նոր ճագեր են դուրս սողում։—Կարիճը շատ վտանգաւոր միջատ է. սև կարիճի կծածից շատ անգամ մարդս մեռնում է։

19. Յ։ *

Տանձ—տանձի—տանձենի։
Խնձոր—խնձորի—խնձորենի։
Կեռաս—կեռասի—կեռասենի։
Թութ—թթի—թթենի։
Նուշ—նշի—նշենի։
Թուզ—թզենի.

*) Յ տառը բառի սկզբում,

Նուռն—նռնենի . . .
Յունապ—յունապի։
Սօսի, բարդի, հացի . . .

Յարկ, հարկ, յարգ, յարդ, հարթ, յամր, համր, յատակ, հատիկ, յետ, հետ, յամառ, համար, յիսուն, Յիսուս։

Ծառն իր պտուղեցը կը ճանաչուի։
Ձար մարդից բարի բան մի սպասիր։
Կաղնի ծառը ապրում է շատ յիսուն տարիներ։—Յամառ տղան ոչ մէկից յարգ չի գտնում։—Մեր տան յատակը շինած է տախտակից։—Ձեր տան յատակը և յարկը ծածկուած են տախտակով։—Յիսուսը սիրում է բարի մանուկներին։

20. Քար։—Ք՝ Ք։

Քիթ Թամք Քամի Աղաքար
Քեռի Քաղաք Սաքք Որձաքար
Քաթան Քացախ Մատանիք Քարասիրտ
Քանոն Քարտաշ Աքաղաղ Քարեղէն

Գարեգինն իր ձիու համար գնեց գեղեցիկ թամբ։—Ձեր տունը շինած է քարու կրից։—Պետրոսը քաղաքում գնեց քանոններ։—Աքաղաղը գեղեցիկ թռչուն է. նա հպարտ—հպարտ ճեմում է բաղումը և հաւերին պահպանում։

Մեղրը քաղցր է, իսկ քացոնը . . .
Քացոնը ընող է, իսկ սոխրծը . . .
Հայը խելոք է, իսկ երկիրը . . .
Ոչխարը խրծիր է, իսկ ուղտը . . .

21. Յ յ Ց։

Կաթսայ, քահանայ, գաթայ, յետոյ, երեկոյ։
Ա՜յ, էյ, թէյ, վա՜յ, հայ, բայ, ցյ։
Մայր, հայր, եղբայր, հօրեղբայր, այծ, կայծ, այս, այդ, այն, այգի, այրի . . .

Հայրը տան համար կաթսայ և թէյի գաւաթ գնեց։—Մայրս ինձ համար գաթայ թխեց։—Այսօր մինչև երեկոյ մենք

այգումն էինք՝ յետոյ երբ մութը կոխեց, տուն գնացինք։

22. ալիւր։—Լ ալ։ իւ։

Կալ	Լեզու	Անիւ	Երիւն
Բալ	Լուսին	Աղնիւ	Աղբիւր
Սալ	Լեղակ	Կռիւ	Աղեւա
Լուծ	Լապտեր	Թիւ	Իւղ

Գիւղացին ցորենը կալսում է կալում։

Աշխատասէր մարդու դրանը քաղցածութիւնը չի մօտենալ։—Երեկ հայրս մի բեռը ալիւր բերեց գիւղից։



23. փիղ—Ֆիլ։ փ, Ֆ։

Փող	Փուք	Փլաւ	Ֆուրգոն
Փոս	Փակ	Փողոց	Մաֆրաշ
Փոր	Փայտ	Փականք	Ռէֆ
Թեփ	Ձափ	Կանեփ	Ֆէս

Փիղն ամեն կենդանիներից մեծն է։
Հայրս ֆուրգոնով փայտ է կրում։
Մեր փողոցում կան փայտէ տներ։
Ձկան մարմինը ծածկուած է թեփով։
Կանեփի թելից թոկեր են շինում։



24. Ժամ. Ժամացոյց։—Ժ. Ժ։ յ։

Ժիր	Բաժին	Բոյս	Աշխոյժ
Կուժ	Բաժակ	Յոյս	Համբոյր
Ժանգ	Բժիշկ	Ռոյր	Պարոյր
Ոյժ	Ժողով	Գոյժ	Ուռոյտ

Առաւօտները ես վարժարան եմ գնում։
—Ութ ժամին մեր դասերն սկսվում են։
—Երեկոները մի երկու ժամ ես պատրաստում եմ միւս օրուայ դասերս.—Ռոյրս նոյնպէս սովորում է ուսումնարանում։—Ծոյլերի նման մենք մեր յոյսը ուրիշների վրայ չենք դնում։

Հայրս միշտ խրատում է մեզ, որ մեր ժամանակն իզուր չկորցնենք։

Խելօք երեխան այսպէս պիտ՝ լինի—
Կանուխ պիտ զարթնէ, շուտ քունն պիտ՝ մտնի.
Պիտի չը մաշէ սիրտը հօրն ու մօր,
Դպրոց պիտ՝ երթայ, կարդայ ամէն օր։

Լուսացաւ, լուսացաւ,
Լուսն է բարին,
Ծիտն է ծառին,
Հաւն է թառին։
Աշխատաւոր, վերկաց բանի,
Ծոյլ մարդու քունը տանի։

Երկնքի դռները բաց էր,
Ոսկէ աթոռը դրած էր,
Քրիստոսը վրէն նստած էր,
Լուսաւորիչը կանգնած էր,
Մեծ ու պստիկ գրում էին,
Արդարները խաղում էին,
Մեղաւորները լալիս էին։

Ամբողջ այբուբենը։

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ
խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո,
չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք�new
և, օ, ֆ։

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ,
յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, եւ, օ, ֆ։

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ,
ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ,
ք, և, օ, ֆ։

Գլխագրերը

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ,
Ծ, Կ, Հ, Ձ, Ղ, Ճ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Չ, Պ,
Ջ, Ռ, Ս, Վ, Տ, Ր, Ց, Ւ, Փ, Ք, Օ, Ֆ։

I. ԵԳԱՀ ՀՈՒՆ

Մի շուն կար։ Մի օր մի կտոր միս բերանին նա անցնում էր կամուրջով։ Ընց կենալիս ցած նայեց ջրին և տեսաւ, որ մի ուրիշ շուն գնում է ջրի միջով և բերանին նոյնպէս մի կտոր միս ունի։ Հ՝ան ագահութիւնը շարժուեցաւ. նա հաջելով ցած թռաւ կամուրջից և կամեցաւ միւսի ձեռքիցը խլել մսի կտորը։ Բայց ի՞նչ։ Ցած թռչելիս՝ իւր բերանի կտորն էլ վայր ընկաւ և ջուրը տարաւ։ Իսկ ջրի մէջ նա ոչ շուն գտաւ, ոչ մսի կտոր. կենդանին խաբուել էր իւր սաուերից։ Ագահութիւնը զրկեց նորան իւր ունեցածից։

II. ԿԱՏՈՒ

Փիսոն շատ չար էր. նա անխնայ խեղտում էր ձեռքն ընկած մկանը և սատիկ նեղն էր գցել նրանց։ Մկներն էլ յիմար չէին. նրանք շուտով ճանաչեցին իրանց թշնամուն և ամէն կերպ աշխատում էին նրանից թաղչել, և երբ որ կատուն տանն

էր, ընից չէին դուրս գալիս։ Բայց փիսոն խորամանկ էլ էր. նա մտաւ ալրի ամբարը, ալրակոլոր եղաւ և այդպէս սպիտակ թան դարձած, գնաց մտաւ հացի տաշտը և մի անկիւնում կծկուեցաւ։ Երկար ժամանակ կատուի ձայնը չէր լսվում. մկները կարծեցին՝ է նա սատկել է, համարձակ դուրս եկան ծակերից և սկսեցին ուտելու բան որոնել։ Մէկ մուկը մօտեցաւ հացի տաշտին, նայեց տեսաւ մի սպիտակ բան։ «Լաւ է, մտածեց նա. այստեղ համ հաց կայ, համ պանիր։» Ասեց ու մօտ վազեց պանրին։ Պանիրն էլ հօ մեր ալրակոլոր կատուն էր. թաթը մեկնեց և տեղն ու տեղը խեղտեց մկանը։ Յետոյ եկաւ երկրորդը, երրորդը, չորրորդը. իսկ մեր փիսոն ամէնքին էլ միւս աշխարհն ուղարկեց։ Վերջապէս մօտ եկաւ մի ծեր ու փորձուած մուկը, կանգնեց տաշտի մօտ և զգուշութեամբ նայեց սպիտակ բանին. յետոյ ճանաչելով նորան, ասեց. «Էյ բարեկամ, քո սպիտականալդ մի գրօշ չ'ածէ իմ աչքումս. ճանաչեցի, միւսան կատուն

ես, միայն շորդ ես փոխել, հոգիդ միևնոյնն է. սրանից յետոյ կուզես տաշտդաւ, կուզես—հաց, կուզես—պանիր, մենք քեզ մօտ եկողը չենք։ Ասեց ու փախաւ, ընկերներին իմացրեց։

III. ՌԱԴԻՈ ԵՒ ՍԳՈՒՐԻՐ

Մի օր բադը գնաց լճի ափը, որ համ մի փոքր լողանայ, համ էլ ուտելու բան գտնի։ Լճի երեսին հանդարտ լողում էր նա. երբեմն էլ գլուխը կոխում էր ջրի տակը և այնտեղից որթեր էր բռնում, ուտում։ Երբոր կերաւ, կշտացաւ, թևերն ուռցրեց և սկսեց լողալով լճի այս ու այն կողմը գնալ։ Մէկ էլ հպարտ հպարտ ձայն տուեց. «Ի՜նչ զարմանալի թռչուն եմ ես, որքան շնորհքի տէր. ջրումը լողում եմ, օդումը թռչում, գետնի վերայ էլ ման եմ գալիս. ճշմարիտ որ աշխարհիս երեսին ինձ նման թռչուն չ'կայ. ես բոլոր թռչունների թագաւորն եմ։»

Լճի ափին դուրս էր եկած մէկ ուռի

ծառ։ Ծառի վրայ այդ բոպէին վէր էր եկել մի ագռաւ և ականջ էր դնում բադին։ Երբոր բադը վերջացրեց խօսքը, ագռաւն ասեց. «Այ միամիտ թռչուն, ինչի՞ ես հպարտանում. կարո՞ղ ես դու շան չափ արագ վազել։»

— Ո՛չ, պատասխանեց բադը։

«Իսկ ձիձեռնակի պէս թռչել կարո՞ղ ես։»

— Չեմ կարող, ասեց բադը։

«Իսկ ձկան պէս կարող ես լող տալ ջրի մէջ։»

— Այդ էլ չեմ կարող, պատասխանեց բադը։

«Ուրեմն էլ ինչի՞ ես հպարտանում ու փքվում, ասեց ագռաւը. ես կարծում եմ՝ աւելի լաւ է, որ մարդս մէկ բան լաւ գիտենայ, քան թէ շատ բան ու բոլորն էլ անկատար։

IV. ՀԱՅԸ ԵՒ ՎԱՌԻԿՆԵՐԸ

Հայը իւր վառիկների հետ դուրս գընաց դաշտը՝ քջուջ անելու։ Քջուջ անելիս՝

մայրը նկատեց, որ ուրուրը պտրտում է երկնքում և կամենում է վառիկներին յափշտակել։ Մայրն առանձին ձևով ձայն տուեց. վառիկները հասկացան, որ վտանգ կայ, շուտով վազեցին իրանց մոր մօտ և նորա թևերի տակը մտան։ Ցինը երկար պտտեց և էլ վառիկ չ՝տեսնելով՝ հեռացաւ գնաց։ Հայը բաց արեց թևերը և վառիկները նորից սկսեցին վազվզել, խաղալ։ Ընցկացաւ միքանի բոպէ. սրատես ուրուրը հեռուից նկատեց ձագերը և դէպի նրանց թռաւ։ Հայն էլ քնած չէր. նա բարձր ձայնով կանչեց իւր ձագերին։ Վազեցին ձագերից շատերը, մտան իրանց մոր թևի տակը. բայց միքանի վառիկներ ականջ չարին իրանց մոր խօսքին. նրանք կարծեցին, թէ ուրուրը առաջուայ պէս առանց իրանց վնաս տալու կըթողնի, կ՝երթայ։ Բայց սխալուեցան։ Ուրուրը նետի պէս վրայ տուեց և նրանցից մինին ու միւսին ճանկերի մէջ առաւ, տարաւ։ Ազատուեցան միայն նրանք, որոնք մոր խօսքը լսել էին ու նրա թևերի տակն էին մտել։

Ե. ՈՍԿԻ

Մի չքաւոր երիտասարդ գնում էր օտար քաղաք, որ իրան համար մի պարապմունք գտնի։ Ճանապարհին նրան պատահեցան երկու ուրիշ երիտասարդներ։ Նրեքն էլ ընկերացան և շարունակեցին իրանց ճանապարհը։ Ճանապարհին նրանք մի տոպրակ ոսկի գտան։ Ոսկին շատ էր. եթէ բաժանէին, երեքին էլ կը հարստացնէր։

Ոսկի ունէին մեր տղայքը, բայց հաց չունէին. սովածութիւնից փորները վեց—վեց էր անում։ Ընկերներից մէկին մի ոսկի տուին, որ գնայ մօտիկ գիւղից ուտելու բան բերի։ Ընկերը գնաց։ Ճանապարհին նա մտածում էր. «Ի՞նչպէս անեմ, որ բոլոր ոսկիքն ինձ մնայ։ Այ ինչ կանեմ, վճռեց նա. գիւղումը մկընդեղ կառնեմ, կերակրի հետ կը խառնեմ և կը տանեմ ընկերներիս համար։ Ընկերներս կ'ուտեն թունաւորած կերակուրը և կը մեռնին, իսկ ոսկին ինձ կը մնայ։»

Միւս երկու ընկերներն էլ ուրիշ տե-

սակ էին մտածում. «Երբոր մեր ընկերը կերակուրը կը բերի, մենք առաջ նրան կ'սպանենք մեր սուր դաշոյններով, յետոյ ոսկին կը բաժանենք մեր մէջ ու հանգիստ սրտով հաց կ'ուտենք։»

Ընկերը վերադարձաւ գիւղից և բերեց թունաւորուած կերակուրը։ Մնացողները նրան սպանեցին, իրանք էլ մեռան թոյնի ներգործութիւնից։ Ոսկին անտէր մնաց։

Զ. ՁԻՆ ԵՒ ԷՇԸ

Գիւղացին մէկ ձի ունէր և մէկ էշ։ Մի անգամ նա պիտի քաղաք գնար. հեծաւ ձին, էշին էլ ծանր բեռնեց և ճանապարհ ընկաւ։ Բայց իշի բեռը շատ ծանր էր. նա հազիւ էր կարողանում առաջ գընալ։ Էշը մօտեցաւ ձիուն. «ընկեր, աղաչում էր նա. խուրջիններից մէկը դու վերառ, որ բեռս թեթևանայ։» Ձին գոռոզութեամբ պատասխանեց. «ես իմ գլուխս այն տեղը չեմ դնիլ, որ իշի բեռը շալակեմ։» Էշը գլուխը կախ արեց և սկսեց

առաջ գնալ։ Բայց մի կէս ժամից յետոյ նրա ուժերն սպառուեցան և նա ծանրութեան տակ ճնշուելով ընկաւ և սատկեց։ Այն ժամանակ տերը վեր առաւ բոլոր բեռը և ձիուն բարձեց, իշի կաշին էլ մաշկեց և վերևից աւելացրեց։ Նոր իմացաւ ձին իւր հպարտութեան հետևանքը, բայց ուշ էր։

VII. ՄԵՂՈՒՆ ԵՒ ՃԱՆՃԵՐԸ

Մի անգամ ճանճերն եկան մեղուի մօտ և գանգատ արին մարդկանցից. «Զար մարդիկը մեզ դադար չեն տալիս. լաւ լաւ կերակուրները ծածկում են մեր աչքից. այս բաւական չէ, թունաւորած թուղթ են դնում տան լուսամուտներում, անկիւններում, մենք էլ միամիտ գնում, ուտում ենք և մեռնում։ Մեզ չեն հալածում խրճիթներում. բայց այնտեղ էլ ուրիշ չար թշնամի ունինք. սարդերն իրանց ոստայները ձգում են ամենայն անկիւններում, մեր ոտները մաճում են և մեզ էլ

խեղդում, մեր արիւնը ծծում։ Չէ, չէ, վատ է այս աշխարհը, այստեղ չ՝արժէ ապրիլ. արի, մե՛ղու եղբայր, թողենք, հեռանանք այստեղից։

Մեղուն լսեց և պատասխանեց. «Դուք գնացէ՛ք, ուր որ կամենում էք. ես ձեր ընկերը չեմ. ինձ համար այստեղ էլ շատ լաւ է. ամէնքն ինձ պատում ու սիրում են, որովհետև ես էլ ամենքին օգուտ եմ տալիս։ Իմ մեղրը թէ չար և թէ բարի մարդի, թէ հարուստի և թէ աղքատի ճաշակը քաղցրացնում է. իմ տուած մոմը Աստուծու տաճարներն է լուսաւորում։ Բայց այս էլ գիտենաք, որ ուր էլ գնալու լինիք, ոչ մի տեղ պատիւ չէք ունենալ. ամենայն տեղ կը հալածեն և կը կոտորեն ձեզ, որովհետև բացի օգուտ չ՝տալուց՝ մարդկանց ճանճրացնում էլ էք։

VIII. IX. ՅՈՐԵՆ ԵՒ ԳԱՐԻ

Գիւղացին երկու օրավար վարելահող ունէր։ Աշնան սկզբներում նա վարեց օրավարներից միսը և ցորեն ցանեց, իսկ

գարնանը միւս օրավարը վարեց և գարի ցանեց։ Հացահատիկները ծլեցին, աճեցին և կանաչ մախմուրի պէս ծածկեցին սև հողի երեսը։ Ամառնադէմ ցորենն ու գարին հասկահանեցին և պաղակալեցին։

Մի օր գարու հասկը խօսիլ սկսեց իւր հարևանի հետ և ասեց. ցո՛ր ենն եղբայր, վատ տեղ է ցանել մեզ մեր տէրը. այս գիւղը շատ աղքատիկ է, ոչ ոսկի ունի, ոչ արծաթ. ո՞վ պէտք է մեր յարդը ճանաչի, մեզ գին տայ։ Արի՛, ցորեն եղբայր, թողենք հեռանանք այստեղից և գնանք այնտեղ, ուր ոսկին առատ է։»

Ցորենը լսեց իւր դրացու խօսքերը և ասաց. «Հատ ափսոսում եմ, գա՛ր ի եղբայր, որ միայն քիստդ ես երկարացրել, իսկ խելքդ կարճ է մնացել. ինչի՞ պէտք է մենք ոսկու յետևից մանգանք. մեր արժէքն այնքան մեծ է, որ ուր էլ լինինք, ոսկի ունեցողները չոքէչոք մեր դուռը կը գան.

X. ԿՈՎ

Մէկ մարդ մի կով ունէր։ Կոփն ամենայն օր նորան մի կովկիթ կաթն էր տալիս։ Այդ մարդը հրաւէրք պիտի անէր, այդ պատճառով տասն օր շարունակ չը կթեց կովը, որ աւելի շատ կաթը կթէ։ Նա կարծում էր, թէ տասներորդ օրը կովը տասը կովկիթ կաթը կը տայ։

Բայց երկար ժամանակ չ՝կթուելուց՝ կաթը ետ տուեց կովի ծծերում, և նա օրէց օր սկսեց ցամաքիլ։

XI. ՈՉԽԱՐ ԵՒ ԳԱՅԼ

Մի օր ոչխարը ջուր էր խմում պարզ առուակից։ Նրանից շատ բարձր՝ նոյն առուակի մօտ կանգնած էր մի գայլ և որսի էր սպասում։ Սա տեսաւ ոչխարին և մօտ վազեց.

— Ա՛նպիտան, գոռաց գայլը. ինչի՞ ես ջուրս պղտորում։

Ոչխարը հեզութիւնով պատասխանեց. տէր, ես ինչպէս կարող եմ քո ջուրդ պղտորել, քանի որ քեզանից հարիւր քայլ ցածր եմ կանգնած։

Գայլը բարկանալով ասաց. երեկ էլ

տեսայ հ.օրդ, որ մայում էր բարձր ձայնով և հովիներին ու ջերին կանչում, որ գան ինձ խեղտեն։

— «Մի ամսից աւելի է, որ մսածախը մորթեց հ.օրս և ծախեց. ես հայր չունիմ, պատասխանեց ոչխարը։

— Ուրեմն մայրդ կը լինէր, վրայ բերեց չար գաղանը։

— «Մայրս էլ ինձ ծնած օրը մեռաւ, ասաց ոչխարը դողալով։

Գայլը տեսաւ, որ օրինական պատճառ չի գտնում նրան ուտելու, ատամները կըրճրտացրեց և ասաց. մեռաւ թէ չմեռաւ ես չեմ գիտում. ձեր ցեղը ինձ ատում է, այդ պատճառով էլ որտեղ որ պատահիմ, ձեզ պիտի ջնջեմ, կոտորեմ։

Ասաց ու վրայ թռաւ, խեղդեց անմեղ ոչխարին ու լափեց։

XII. ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ՕՁԸ

Գիւղացին գնաց անտառը՝ փայտ բերելու. Փայտ կտրելիս՝ նա տեսաւ մէկ օձ,

որ ցրտից սառել՝ ընկել էր. խղճաց օձին, վերցրեց, բերեց իւր խրճիթը և դրեց վառարանի առաջը, որ տաքանայ։ Բայց օձը հէնց տաքացաւ թէ չէ, աչքերը բաց արեց, տեսաւ մօտը կանգնած գիւղացուն և յարձակուեցաւ նորա վերայ, որ կծի։

— Ո՛վ ապերախտ, ասաց մարդը. իմ լաւութիւնը դրանով ես վճարում։ Այս ասաց ու ձեռքի փայտով խփեց, գլուխը ջախջախեց։

XIII. ԾԱՌԻԵՐՆ ՈՒ ԿԱՑԻՆԸ

Գիւղացին կացին ունէր, բայց կոթ չունէր, որ նրա վրայ անէր և գործ ածէր։ Նա գնաց անտառը և ծառերին խնդրեց, որ իրան կոթացու տան։

— «Մի կոթացուն ի՞նչ է, որ խնայենք, ասաց անտառը. տա՛ր, որը որ կամենում ես։

Գիւղացին ջոկեց մի ընտիր և ամուր փայտ և տարաւ՝ իր կացնի համար կոթ շինեց։ Այնուհետև նա ամենայն օր գալիս

էր անտառը և անխնայ կտրատում էր ծառերը իւր պէտքերի համար։

Տեսնում են ծառերը գիւղացու արարքը և սկսում են գանգատուիլ ու տրտնջալ կացնից։

— Իզուր տեղը մի տրտնջաք, ասում է մի ծերունի ծառ. կացինն ամենևին մեղաւոր չէ. նա ի՞նչպէս կարող էր մեզ վնաս տալ, եթէ կոթը մեզանից չլիներ։

XIV. ՓԻՂ

Մի անգամ փիղը մօտեցաւ մի դերձակի խանութին և կնճիթը լուսամուտից ներս մտցրեց։ Դերձակն ուզեցաւ չարութիւն անել. նա վերցրեց միքանի ասեղ և նրանցով ծակծկեց կենդանու քիթը։ Փիղը յետ քաշեց կնճիթը և հեռացաւ. նա մանեկաւ քաղաքի փողոցներում, գտաւ մի փոս կեղտոտ ջրով լեցը, կնճիթը մէջը կոխեց, լցրեց և յետ դարձաւ դէպի դերձակը։ Միամիտ նստած էր վարպետը և գլուխը կախ արած՝ կար էր անում։ Փիղը մօտեցաւ լուսամուտին, կնճիթը ներս մտցրեց

և կեղտաջուրը թափեց դերձակի գլխին ու թողեց գնաց։

Ինչ որ կ՚ասես, այն կը լես։
Ինչ կը ցանես, այն կը հնձես։

XV. ԾԱՌԱՅՈՑ

Պարոնը պարկեց քնելու, ծառային էլ պատուիրեց, որ զգոյշ կենայ, ձայն, աղաղակ չլինի, որ քունը չխանգարուի. Ծառան գլուխ տուեց ու դուրս գնաց։ Մի քանի րոպէից յետոյ նա զգուշութեամբ մօտեցաւ դրանը և ականջ դրեց, որ տեսնի՝ թէ պարոնը քնած է։ Նա սենեակում մի չըխկ-չըխկոցի ձայն լսեց. ներս մտնի, ինչ տեսնի՝ պատից մի ինչ որ կախ է արած և օրօրուելով՝ չըխկ-չըխկում է։

— Ձայնդ կտրի՛ր, ասաց ծառան ճրնշուած ձայնով. պարոնը կը զարթի։

Բայց պատից կախարած բանը ծառային ականջ չէր դնում և շարունակ չըխկ-չըխկում էր։

— Երևի այդ անիծած բանի մէջը սատանայ է նստած, մտածեց ծառան։ Նա աթոռը մօտ բերեց, բարձրացաւ, պատից

ցած բերեց սատանի բունը և շտապով դուրս տարաւ սենեակից։

— Այս քեզ ցոյց կը տամ, թէ ինչ է նշանակում անհանգիստ անել իմ պարոնին, ասաց ծառան և մի մեծ քար խտրտած՝ բերեց գցեց ժամացոյցի վերայ ու ջախ-ջախեց։

— Դէ գնա՛, որտեղ որ քոնն ասես, այն-տեղ էլ իմն ասա՛, պարծենալով կանչեց ծառան։

Պատմեցէ՛ք թէ ինչ է նկարած այս պատկերի վերայ։

(ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ ԱՅԲՈՒԲԵՆԻՑ ՅԵՏՈՅ)

25. Դասական առարկաներ և խաղալիքներ

Դասական առարկաներ. Գիրք, գրիչ, քանոն, մատիտ, տետրակ, գրատախտակ, քարետախտակ, քարե-գրիչ, թանաքաման, գրչահատ, գրչակալ, կաւիճ . . .

Խաղալիքներ. Գնդակ, տիկին, հոլ (բզզան), վէգ, պտուտակ, չիլիկ, չիլկափայտ . . .

Քարեգրիչ. Գնդակ. Մատիտ. Տետրակ. Տիկին. Քանոն. Թանաքաման. Հոլ. Չիլիկ. Գրչահատ. Վէգ. Գրատախտակ. Պտուտակ . . .

Գիրք կարդա՛, կարդացածդ հասկացիր։ — Ինչոր գրուեցաւ գրիչով, չի հանուիլ բահով բրիչով։—

Մատիտը մատիդ, կօշիկը ոտիդ, ճամբայ որ երթաս, միշտ լինին մօտիդ։—Հոլը կուզէ խարազան, որ պըտոյտ գայ անխափան։—Վէգի կարմիրն է սիրուն, վաստակ է խփողներուն։—Զուան ցատկելն օգտակար՝ շարժմունք է մանկանց համար։

Առաջնեը. Գիրք—մէջը քաղցը մերգ։—Ով կը կարդայ, նա մարդ ա։—Ով կը խաղայ, նա կը կաղայ։ Ով որ աշխատի, նա կուտի։

Հանելուկներ։ 1. Գլուխս կտրեցին, սրտիկս հանեցին, ղինի խմացրին. լեզուս բացուեցաւ, խօսիլ սկսաւ։

2. Քանի որ ծեծը կ՚ուտէը, ուրախութեամբ կը պտտէր, երբոր ծեծը վերջացաւ, ընկաւ գետին ու մեռաւ։

Աքաղաղ

Դուշլենք ասա՛, աքաղաղ,
Ոսկէ կատարիդ մատաղ,
Կարմիր մերուքիդ մատաղ,
Ինչի՞ ես շուտ արթնանում,
Բարձր բարձր երգ ասում,
Քաղցը քունս խանգարում։

Դասատուն։

Դասատան մէջ նստած են մանուկները։ Մանուկների առաջ կանգնած կամ նստած է վարժապետը։ Վարժապետը սովորեցնում է։ Մանուկները սովորում են։ Երբոր վարժապետը ներս է մտնում, աշակերտները ոտի են կանգնում և աղօթում են. յետոյ նրանք նստում՝ իրանց դասերն են սովորում։ Մանուկները դասատանը կամ կարդում են կամ գրում. երբեմն նրանք նկարում են. շատ անգամ հաշուում են թուերով։ Դասատանը դրած է մի մեծ գրատախտակ։ Գրատախտակի մօտ դրած է կաւիճ և սպունգ։ Աշակերտների առաջ դրած են քարետախտակներ։ Քարետախտակների վերայ գրում են քարեգրիչներով։

Ո՞վ է նստած դասատան մէջ։—Ո՞վ է կանգնած աշակերտների առաջ։—Ի՞նչ է անում վարժապետը։—Ի՞նչ են անում աշակերտները։—Երբ վարժապետը ներս է մտնում, աշակերտներն ի՞նչ են անում։—Ի՞նչով են պարապում նրանք։—Ի՞նչ կայ դասատան մէջ բացի գրատախտակից։

26. Ուտելիք և խմելիք։

Ուտելիք. Հաց, արգանակ, սպաս, խորոված, մածուն, սեր, փլաւ, գաթայ . . .

Խմելիք. Ջուր, թէյ, սուրճ, գինի, գարեջուր, կաթը . . .

Գաթայ. Կաթը. Հաց. Գրիչ. Գնդակ. Մածուն. Մատիտ. Սեր. Սուրճ. Քարեգրիչ. Զիլկափայտ. Գրչահատ. Փլաւ. Տապակած. Խորոված . . .

—

Առածներ. Աղ ու հաց, սիրտը բաց։—Հաց ու պանիր, կիր ու բանիր։—Հացի կտրածը Թուրը չի կտրիլ։—Սերը սովորը կուտի, Թանը մոլորը։—Կուշտը սովածին մանը կը բռդի։—Ջուրը իր գնացած տեղովը կերԹայ։—

Հանելուկներ. 1. Ճերմակ տակառիկ, մէջն երկու ցեղ ըմպելիք։

2. Օրան օրան շուռ է գալիս, ոտներ չունի ման է գալիս, բերան չունի կուլ է տալիս։

3. Զգեստը բոլոր կապուտ է, մարմինը զուտ սպիտակ. գլուխը սուր որպէս վեղար. ոտը խոնջի նման տափակ։

Ջոկջոկ և միասին։

Վարդանիկն ու Սաթինիկը իրար հետ խաղում էին։ Վարդանիկն իր հոլն էր պտտացնում. Սաթինիկը տիկինով էր խաղում։ Վարդանիկը բարկացաւ Սաթինիկի վերայ. իմ հոլին մի մօտենար, ինձ հետ խաղ մի անիր—ասաց։—Դու էլ իմ տիկինին մի ձեռք տար, պատասխանեց Սաթինիկը նեղացած։

Մանուկները յօնքերը կախեցին։ Նորանք հեռացան իրարից և սկսեցին ջոկջոկ խաղ անել։ Բայց մենակ սկսած խաղն էլ երկար չ՝քաշեց և մեր մանուկները շուտով վեր գցեցին իրանց խաղալիքները։

Մանուկներն իրանց խաղը ինչի՞ չՀարունակեցին։

Գառնուկ։

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
Բուրդդդ սպիտակ ու փափուկ,
Դաշտ վազելով ու արօտ,
Մօրդ քաշում ես կարօտ.
Մի լար, գառնուկ սիրական,
Փոքրիկ տղի դու նման,
Կը գայ մայրդդ, հետը շատ
Կը բերէ քեզ անուշ կաթ։

27. Ամարկանների թիւն ու կարգը։

Թիւը. Մէկ, երկու, երեք, չորս, հինգ,վեց...

Կարգը. Առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ։

Առածներ. Խմացողին մին, չխմացողին հազար։ Մին ասա, հինգ լսէ, հինգ չափէ, մին կտրէ։

Հանելուկներ. 1. Մէկը մէկելի վրայ, վեցի կէսը կը դառնայ։ 2. Երկուսը մէկին, երեքն երկուսին, մէկմէկու հետ խառնեցին, բաժանել չկարացին։



Նապաստակ.

Մի վազիր այդչափ արագ,
Իմ սիրունիկ նապաստակ,
Շատ պստիկ ես տակաւին,
Թաթիկներըդ կը յոգնին։
Կա՛ց՝ քեզ համար հաց բերեմ,
Շաքարեղէն ուտացնեմ,
Մինչ մեծանաս զօրանաս,
Յաթիկելով մօտը խաղաս։
Ծանը-ծանը կը քայլես,
Սիրտս վեր վեր կը հանես.
Կ՝արձակեմ քեզ ապա ես,
Կ՝երթաս, ազատ կ՝արածես։

Տուն.

Մեր տունը մեծ չէ. նա ունի երեք սենեակ և մի խոհանոց։ Սենեակներից մէկում ես ու եղբայրս սովորում ենք մեր դասերը։ Երկրորդ սենեակում մենք ճաշում ենք։ Նորա մէջ դարսած են շատ աթոռներ, մի մեծ սե-

ղան և ուրիշ կարասիք։ Ամենից մեծ սենեակում մենք քնում ենք. դա կոչվում է ննջարան։

Մեր տան բաղը շատ մեծ է։ Բաղի աջ կողմը մի փոքրիկ պարտէզ կայ, իսկ ձախ կողմը շինած է մի փայտէ տնակ։ Այնտեղ դրած են ամեն տեսակ մանր բաներ։ Առաջին պատի մէջ շինած է բաղի մեծ դուռը։ Բաղումը բնակվում է մեր տան հաւատարիմ պահապանը—շունը։

Ի՞նչ տեսակ տուն ունիք դուք։
Քանի՞ սենեակ ունի ձեր տունը։
Ո՞ր սենեակի մէջ ինչ էք անում։
Ի՞նչ կայ շարուած սենեակների մէջ։
Ի՞նչպիսի բաղ ունի ձեր տունը։
Ի՞նչ կայ շինուած բաղի այս և այն կողմը։
Ո՞վ է պահպանում տունը։

Ի՞նչ բան է տունը։—Ի՞նչից են շինում տները։—Եվ ի՞նչ շինուածներ գիտէք։



28. Գործիք.

Դանակ, գդալ, պատառաքաղ, ասեղ, մկրատ, ուրագ, կացին, թուր, դուր, մուրճ, սղոց, արօր, շղթայ, թիակ, մանգաղ, մաղ, գերանդի, եղան, բահ, հրացան...

Առաձներ. Խոփդ սուր է, հանդը բաժանովի է։—Բգի գլխին բռունցքով տալ չի լինել։—Ուրագն իր կոթը չի տաշել։

Հանելուկներ. 1. Տապանը փայտ է, մեռելն երկաթ է, երբոր ծայն կը տայ, աշխարհ կը թնդայ։ 2. Փթած փայտը փորեցին, առիւծը մէջը թաղեցին։

Ինչո՞վ ի՞նչ են անում։

Կայնով ֆոլում են, խոչ ոչնչով . . . Ի՞նչ են անում ոսկեղով . . . գրչով . . . ալրով . . . մանգաղով . . . սանրով . . . գանակով . . . պապասաֆաղով . . . ուղղով . . . ելով . . . ելրով . . . մուրճով . . . կողպեքով։

Ի՞նչ գործիք գիտէք, որ միեւնոյն ժամանակ դասական առարկայ լինի։ Գրաւոր ներկայացրէ՛ք վերոյիշեալ վարժութիւնը։

Գիւղացին և վարունգը։

Գիւղացին գնաց պարտէզ՝ վարունգ գողանալու։ Փորսող տալով նա մօտեցաւ մարգերին և մտածում էր. «Ահա՛ կը քաղեմ մի տոպրակ վարունգ և կը տանեմ, կը ծախեմ. այն փողերով մի հաւ կ՝առնեմ։ Հաւը ձու կ՝ածէ, թուխս կը նստի, ձագեր կը հանէ։ Ձագերը կը մեծացնեմ, կը ծախեմ և մի խոզ կ՝առնեմ։ Խոզը մի տարումը երկու-երեք անգամ կը ծնի, կը բազմանայ։ Խոզի գոճիքը կը վաճառեմ, մատակ ձի կառնեմ. ձին քուռակ կը բերէ։ Քուռակը կը մեծացնեմ, լաւ գնով կը ծախեմ, մի տուն կ՝առնեմ և առաջը պարտէզ կը շինեմ։ Պարտէզ կը շինեմ, վարունգ կը ցանեմ և պահապաններ կը կանգնեցնեմ, որ գող չ՝մտնի։ Պահապաններ կը կանգնեցնեմ, որ վարունգները պահեն և ինքս էլ երբեմն կը գամ և կը կանչեմ. «Է՛յ, դուք, լա՛ւ պահպանեցէ՛ք»։ Գիւղացին մոռացաւ, որ ինքը օտարի պարտիզումն է, և բարձրաձայն արտասանեց վերջին խօսքերը։ Պարտիզպանները զարթեցան, վրայ թափեցին և լաւ թակեցին նրան։

—

Հնչում են (ինչո՞վ) . . . թանգում են . . . թեքում են . . . ֆոլում են . . . ուղղում են . . . գրում են . . . երկաթը ծեծում են . . . ալրում են . . . ֆոլում են . . . չխում են . . . ֆորում են . . . պողում են . . . պոչում են . . .

Բերանացի՛ եւ գրաւո՛ր։



29. Կարասիք և ամաններ։

Կարասիք. Սեղան, աթոռ, բազկաթոռ, գահաւորակ (դիւան), մահճակալ, օրօրոց, պահարան, նստարան . . .

Ամաններ. Գաւաթ, ափսէ, բաժակ, կուժ, հեղուտաեռ, կաթնայ, թաւայ, պնակ, շիշ . . .

Առածներ. Ա՛յ կուժ, քեզ ասեմ, ա՛յ կուլայ, դու իմացիր։—Մի բաժակ ջուրը, ով ուզի տուր։—Կուժը ջրի ճանապարհին կը կոտրի։ Աւելորդ կահ—կարասի՝ պատճառ է շատ վնասի։

Հանելուկներ. 1. Զորս եղբայր մէկ գրակի տակ. կարծում եմ թէ չ՝գտաք։

2. Վերեւից երդիկ, ներքեւից ղռնակ, մէջ տեղումը ջուր ու կրակ։

*
* *

Մանգաղը գործիք է, իսկ գաւազանն ամոն է։—Ի՞նչ բան է հայը . . . սուրը . . . աղոյը . . . գրիչը . . . գնդակը . . . սեղանը . . . գինին . . . խմելուն . . . մահճակալը . . . ճաքարը . . . կովը . . . ցորեն . . . բահը . . . ջուրը . . . ոչը . . . մաղը . . . պանիրը . . . գահու



3. Ձկներ. Կարմրախայտ, գեղարքունի, օրագուլ, տառեխ, կապուտ . . .

4. Սողուններ. Օձ, մողէս, գորտ, կրիայ . . .

5. Միջատներ. Մեղու, ճանճ, մոծակ, մրջիւն, մորեխ, բզեզ . . .

Առածներ. Շան հետ ընկերացիր, փայտը ձեռքդ մի գցիր։ Գայլի գլխին աւետարան էին կարդում, ասում էր՝ շուտ արէք, ոչխարը սարից անցկացաւ։—Գայլի անունն է կոտրած, աղուէսը աշխարհ քանդեց։—Աղուէսի դունչը խաղողին չը հասաւ, ասեց խակ է։—Մի ծաղկից մեղուն մեղր է շինում, օձը թոյն։

Հանելուկներ. 1. Մի շէնք ունիմ բարձր ու շարժուն, ներքևն ունի չորս հատ հաստ սիւն։ Մի դուռ փոքրիկ՝ նեղ, գալարուն, վերան շքեղ մի վերնատուն։

2. Քարը քարի վրան՝ քար չէ, արածում է՝ տաւար չէ, ձու է ածում՝ հաւ չէ։

Արև.

Ա՛րև, ա՛րև, եկ, եկ,
Զիզի քարին վեր եկ,
Մեր ոչխարին մտիկ արա՛,
Որ գայլը գայ, իմաց արա՛։

Երկու աքաղաղ։

Երկու աքաղաղ կռուեցին և մինը յաղթեց միւսին։ Յաղթուողը փախաւ, մտաւ սրահի տակը. յաղթողը բարձրացաւ կտուրը և բարձր ձայնով կանչեց՝ ծո՛ւղ—րո՛ւ—ղո՛ւ։ Յանկարծ արծիւը՝ որ այդ ժամանակ թռչում էր վերևից, տեսաւ հպարտացող աքաղաղին, յափշտակեց նորան և տարաւ, անուշ արաւ։

—

Ձին ընդանի էնդրանի է, իսկ օշը . . . Մուշէսը սողոն է, իսկ մեղո՞ն . . . Ոսպասպո՞ղը . . . ճնճղո՞ւը . . . Մրսե՞ղը . . . ոշնի՞ն . . . Հղջի՞ղը . . . Գեղարքոնի՞ն . . . էշո՞ւը . . . Ի՞շը . . . Ընկնեանի՞ղը . . . օրագո՞ւը . . . ոչոգո՞ւը . . . մրջի՞ւն . . . էրկնո՞ն . . . Ի՞նչ բան է գրասպիսակը . . . գրասեղանը . . . հուշը . . . ոռ—ոճը . . . պանիրը . . . մահճակալը . . . քաղաքը . . .

Բերանացի՛ եւ գրաւո՛ր։

Երեկոյեան աղօթք։

Տէր Աստուած իմ, Տէր բարերար,
Դու պահպանէ՛ ինձ այս գիշեր,
Տուր հօրս և մօրս կեանք երկար,
Հանգըստութիւն ու լաւ օրեր։
Քո սուրբ հրեշտակը մեր մօտից
Չը հեռանայ ամենևին,
Այլ պահէ միշտ փորձանքներից,
Արթնացընէ զուարթագին։

Աղուէսն ու ճագարը։

Խորամանկ աղուէսը մօտեցաւ փոքրիկ ճագարի որջին և ցած մտիկ տալով՝ ասաց նորան. «Ճագար, ի՞նչու ես այդպէսի խոր փոսի մէջ պահուել. դուրս արի այդ մութ ծակից, արածիր պայծառ արևի տակ։»

Շնորհակալ եմ բարի խորհրդիդ համար. ես կաշխատեմ կատարել նորան, երբոր դու կը հեռանաս հոյս տեղից։ Բայց քանի որ դու այստեղ ես, որջիս մէջ կը մնամ, որովհետև միտք չունիմ քեզպէսների հետ բարեկամութիւն անելու։

Պառաւն ու այծը։

(Մանկական երգ)

Պառաւն մի այծ ունէր,
Փոքրիկ, սիրուն այծ.
Նորանով ապրում էր
Աղքատ մնացած,
Խրղճուկ, մենակ,
Աղքատ մնացած։
Մի օր իւր այծիկը
Նա հանդը տարաւ
Եւ կանաչ խոտումը
Արածացրրաւ,
Կուշտ-կուշտ, կուշտ-կուշտ
Արածացրրաւ

Մարտ ամսի վերջերն էր,
Խիստ քամի փչեց,
Պառաւի աչքիցը
Այծը կորցրեց.
Ափսոս, ափսոս,
Այծը կորցրեց։
Նորանով գայլերը
Կերակրուեցին
Եւ խղճուկ պառաւին
Պոզերը թողին.
Միայն, միայն
Պոզերը թողին։

Պառաւը նստած էր
Փունջ խոտը ձեռին,

Անմխիթար ձայնով
Կանչում էր այծին.
Ե՛կ—եկ, եկ—եկ,
Կանչում էր այծին։

31.

Օրուայ մասերը. Յերեկ, գիշեր, առաւօտ, կէս օր, երեկոյ, կէս գիշեր։

Շաբաթուայ օրերը. Կիւրակի, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ։

Տարուայ եղանակները. Գարուն, ամառ, աշուն, ձմեռ։

Առածներ. Էսօրուայ բանը էգուց մի գցիր։—Էսօրուայ փուշը, էգուցուայ նուշը։—Վեց օր գործիր, եօթներորդ օրը հանգստացիր։

Հանելուկ. Մի մանուկ կար՝ զօրեղ հրեղէն, խմեց հատցրեց ջուրը գետից. բոլոր մարդկանց արաւ նա բէն՝ հնձեց վերցրեց խոտը դաշտից։

Ե՞րբ է լինում։

Ձիւնը հալվում է, խոտը կանաչում, ծառերը ծաղկում, օրը երկարում։—Այս ե՞րբ է լինում։

Ամիսներ անցան, օրերն տաքացան. ամպեր բարձրացան, անձրև թափեցին։ Արտերն հասել են, հնձող են կանչում։—Այս ե՞րբ է լինում։

Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին։ Օրը կարճացաւ, հունձը վերջացաւ. բարակ անձրևը բարձրից է թափվում, իսկ մութ գիշերը չորս կողմդ բռնում։—Այս ե՞րբ է լինում։

Դաշտ ու ձոր ահա՛ ձիւնով ծածկուեցան. ծառերից սառցէ շիթեր կախուեցան։ Մարդիկ ներս մտան իրանց տները, իսկ գազանները—իրանց բները։ Դուրսը սաստկութեամբ քամի է փչում և ձիւնի փոշիով աչքերդ լցնում։—Ասացէ՛ք տեսնեմ, այս ե՞րբ է լինում։

Աշուան.

Փայլուն ճաճանչով արևելք ծածկուեցաւ.
Գետի մօտ գիւղի կրակը հանգաւ.
Դաշտի ծաղիկներն ցօղով ծածկուեցան.
Տաւար ու ոչխար արօտ դուրս եկան.
Թանձր մէգերը երկրից հեռացան.
Ամեն կենդանիք դաշտը լցուեցան.
Մարդիկ զարթեցան, գործը ձեռք առան.
Արևը ելաւ, աշխարհ բերկրեցաւ։

32. Բոյսերի տեսակները։

Ծառեր. Հացի, լորենի, կաղնի, խնձորենի . . .
Թփեր. Մորենի, վարդենի, մոշի, մասրի . . .
Բանջարանոցի բոյսեր. Սիսեռ, լոբի, բողկ, սոխ, վարունգ . . .
Հացաբոյսեր. Ցորեն, գարի, կորեկ, բրինձ . . .
Խոտեր. Անանուխ, եղինջ, թրթնջուկ . . .
Սունկեր. Կարմրասոկոն, ոչխարասոկոն, գայլասոկոն, անտառասոկոն . . .
Առածներ. Ծառն իր արմատից կը չորանայ։—Պըտղատու ծառը գլուխը կախ կը պահի։—Մի ծաղկով գարունք

չէ՛ լինիլ։—Բարի ծառը բարի պտուղ կը բերի։—Ամեն ծառ իր պտղից կը ճանաչուի։

Հանելուկներ.

1. Է նա կանաչ կոնակ բոլոր, մաքուր հիւթով լցուած տկնոր, կարմիր մեղուք ներսը բոլոր, ե՛ղբայր, դու կեր իրր մեղրի ծոր։
2. Բռնեմ ափովս, շաղ տամ թաթովս, մեռնի տարով, ապրի բարով։
3. Ոսկէ կնուճիկ, միջուկն անուշիկ։
4. Գարնանը դաշտումը տեսայ մի ծաղիկ, կանաչ տերեւ ունէր եւ կապոյտ աչիկ. խոտերի մէջ հազիւ նա տեսնվում էր. թէեւ համեստ ծաղկած՝ սիրուն հոտ ունէր։

* * *

Խնչորենին ծառ է, ինչ վարդենին ծառ է։ Անանուխը խոտ է, ինչ սխնէ՝ . . . ցորենը . . . հարդոտիլը . . . հաշենին . . . մորենին . . . լոբին . . . գարին . . . ընկոյզենին . . . ճանչնդեղը . . . սոմիը . . . բրինջը . . . հաշամբը . . . հնոտը . . . հորենը . . . վարունգը . . .

Ընձրև

Ա՛նձրև, անձրև՝ ցած արի,
Բըսցուր ցորեն ու գարի,
Բըսցուր ծաղիկ, կանաչ խոտ,
Աւլէ՛ փոշի, մաքրէ՛ օդ։
Ա՛նձրև, անձրև, ցա՛ծ արի՛,
Գալըդ ամենուս բարի։

Մեղու.

Հա՛, ծագեցաւ արեգակը,
Հա՛, ծաղկեցաւ մանուշակը,

Մեղուն թողեց իր փեթակը
Տըզտըզալով-տըզտըզալով։

—

Մեղուն թռաւ ծաղկէ ծաղիկ,
Մեղը առաւ քաղցր—անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ, լուսիկ,
Պըզպըզալով-պըզպըզալով։

—

Անուշ մեղրը՝ մանր տըղոց,
Դեղին մոմը ամեն սրբոց,
Իսկ չարերին կըճ ու խայթոց,
Կըսկըծալով-կըսկըծալով։

Խնդիր առակի ձևով։

Գիւղացին սայլով խոտ էր տանում. սայլի մէջ կային նմանապէս մի գայլ և մի գառը. նա հասաւ գետի եզերքը, և երբ կամենում էր կամուրջից անցկենալ, պահապանը առաջը կտրեց և ասաց. Եթէ ուզում ես, որ թողնեմ առանց վարձի կամուրջից անցկենաս, պէտք է կատարես մի պայման՝ աշխատիր անցկացնել քո ապրանքդ ջոկ ջոկ—գայլը, գառը և խոտը, միայն այնպէս, որ միմեանց վնաս չը հասցնեն։

Ի՞նչ անէր գիւղացին. եթէ առաջ գայլը տանէր, գառը կուտէր խոտը, եթէ խոտը տանէր, գայլը կը պատրաստէր գառը։ Մտածեց—մտածեց մեր գիւղացին և իւր ապրանքն այնպէս հնարքով անցկացրեց, որ մէկը միւսին ամենևին վնաս չը տուեց։

Ի՞նչպէս անցկացրեց գիւղացին իւր ապրանքը, պատմեցէ՛ք։

33. Հանքերի տեսակները։

Թանկագին մետաղներ. Ոսկի, պլատին, արծաթ։
Հասարակ մետաղներ. Երկաթ, պղինձ, արճիճ, կլայեկ...
Թանկագին քարեր. Անդամանդ, զմրուխտ, յակինթ...
Հասարակ քարեր. Որձաքար, չէչաքար, աւազաքար...
Հողեր. Սևահող, աւազահող, կաւ, կիր...
Աղաներ. Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է։
—Ոսկին փոքր է, բայց գինը մեծ է։

Հանելուկներ. 1. Երկու եղբայր խիստ որոնուած, երկուսն էլ մէկ մօրից ծնուած. մեծի փոքր է պատիւն ու գին, փոքրը՝ յարգի և թանկագին։

2. Կորակ—դեղին, աշխարհի սիրելին։

ՄԵՏԱԼՆԵՐԻ ՎԷՃԸ։

Ոսկին.

«Ամենքը գովում են ինձ, ամենքը պատւում, և մարդ չ՚կայ, որ իմ բարեկամութիւնս չուզենայ։ Հարուստները ո՛չ թէ միայն փողի տեղ են գործածում ինձ, այլ և իրանց անձը զարդարում են ինձանից շինած շղթաներով, մատանիներով և ուրիշ հազարաւոր զարդերով։ Ում որ սիրում են, նորա անունը ոսկի են դնում, ճշմարիտ խօսքը հալած ոսկի է համարվում . . . Է՜հ, էլ ի՞նչ երկարացնեմ, ոսկու պատիւն ու գինն այնքան մեծ է, որ՝ եթէ կամենամ, կարող եմ ամբողջ աշխարհս ոսկով գնել։»

ԵՐԿԱԹ.

—Հա՛, հա՛, շատ ճշմարիտ ես ասում, ոսկի՛ աղայ, մարդկանց աչքերը շլացնելում դու վարպետ ես, և քեզ ստանալու համար շատ մարդիկ իրանց գլուխը մահի են տալիս։ Բայց այս էլ լաւ իմանաս, որ ապահով ու կուշտ ապրելու համար երկաթն աւելի հարկաւոր է. ոսկէ կացնով փայտ չեն կտրում տուն շինելու համար. ոսկէ հրացաններով մարդիկ իրանց անձը չեն պաշտպանում գազանների և չարագործների երեսից։ Ուրեմն կուշտ և ապահով ապրելու համար երկաթ աւելի է հարկաւոր։ Դու, ոսկի՛ աղայ, ամեն բան կարող ես գնել, իսկ ես, եթէ ուզենամ, կարող եմ բոլորը ձեռքիցդ խլել։

Տղայոց աղօթք.

—«Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի,
Դու՝ ինձ ամեն օր տաս հազար բարի՝
Կեանք, լոյս, կերակուր, հայր և քաղցրիկ մայր,
Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր.
Իսկ ես ի՞նչ ունիմ, որ ինչ տամ քեզի,
Առջևդ կընկնիմ, կենամ աղօթքի.
«Շնորհդ տուր ինձ, որ ծնողներիս,
Ուսուցիչներիս և իմ մեծերիս
Լինիմ սիրելի, իսկ քեզ հաճելի»։

Աքլաւոր.

Ինչու՞ աքլաւորը կանգնած է բակում,
Գինդ գինդ կանչում է իր կուկուրիկուն։

Էնդուր որ վաղուց արևն է ծագել,
Բայց ծոյլ երեխան քնից չէ զարթել,
Դեռ չէ վերկացել, աղօթքն արել,
Դրպրոցի դասը դեռ չէ սովորել։
Կանչում է աքլաւորն իր կուկուրիկուն,
Տըղայոց պարտքը միտերն է ձըգում։

34. Մարդու մարմնի մասերը։

Մարմնի անդամները. Գլուխ, պարանոց, բուն, ձեռներ, ոտներ։

Գլխի մասերը. Գաղաթ, ծոծրակ, քունքեր, ճակատ, դէմք։

Դէմքի մասերը. Յօնքեր, աչքեր, քիթ, թուշեր, բերան, կզակ։

—

Առածներ. Աստուած ձեռք է տուել բան չինելու համար։—Հացն ուտելով, բանն անելով։—Բանի անունը տալիս՝ գլխի ցաւը բռնում է։—Ծոյլ մարդու ձեռները միշտ փլաւ են ուտում։—Մի ձեռը ծափ չի տալ։—Մարմնու Ճրագն աչքն է։

Հանելուկներ. 1. Մէկը կանգնած խօսում է, երկուսն սկանջ են դնում, իսկ երկուսը նայում են։

2. Երկու սենեակ մի սիւնանի։

Շուտասելուկ. Փոկակապ Յակոբ ապեր, թէ կարաս մի փոկ կապես, ես քեզ կասեմ՝ շնորհդ շատ, փոկակապ Յակոբ ապեր։

Համբերութիւնը կեանք է։

Աքաղաղն ու Հաւը եղբայրացան։ Աքաղաղը գնաց այգին և խակ պտուղներ էր ուտում. Հաւն էլ ասում էր Նորան՝ մի՛ ուտիր, եղբայր, թող Հասնի, յետոյ կ՝ուտես։ Աքաղաղն սկանջ չ՝դրեց. Նա այնքան կերաւ, որ հազիւ կարողացաւ տուն Հասնիլ։

—Վա՛յ, քուրիկ, փորս ցաւում է, ասում էր աքաղաղը։—Հաւը Նորան անանուխի կաթիլներ խմացրեց, մանանեխ շաղախեց, փորին դրեց և ցաւն անցկացաւ։

Աքաղաղն առողջացաւ և գնաց դաշտը։ Այնտեղ Նա թռչկոտաց, վազվզեց և բոլորովին քրտնած՝ մօտեցաւ աղբիւրին, որ սառը ջուր խմէ։ Հաւը խրատում էր Նորան. մի՛ անիր, եղբայր, ասում էր, սպասի՛ր, քիչ Հանգստացի՛ր, յետոյ կը խմես։ Աքաղաղն սկանջ չ՝արեց Նորան՝ սառը ջուրը խմեց, մրսեց և սկսեց դողացնել։ Մեծ դժուարութեամբ կարողացան տուն Հասցնել Նո-

բան։ Հաւը վազեց բժիշկ բերելու։ Բժիշկն եկաւ և Նորա Համար դառը դեղ դրեց։ Աքաղաղը երկար ժամանակ պարկած էր ակողնումը։

Ձմեռնադէմ աքաղաղն առողջացաւ և գնաց գետի ափը խաղալու։ Գետը ծածկուած էր բարակ սառուցով։ Նա կամեցաւ սղղալ սառուցի վերայ։ Հաւն այս անգամ էլ խրատում էր Նորան։ Մի՛ անիր, եղբայր, դեռ սառուցը բարակ է, կը կոտրուի և կը խեղտուիս։ Բայց աքաղաղը չ՝լսեց Նորան և սկսաւ սղղալ, խաղալ։ Յանկարծ սառուցը կոտրուեցաւ և մեր անՀնազանդ աքաղաղն ընկաւ ջրի մէջն ու խեղտուեցաւ։

Ձիւն.

Երբ որ ձիւն կուգայ, ես կ՝ուրախանամ,
Որ դուրս պիտ ելնեմ, դահուկ պիտ խաղամ...
Բայց տեղս օրքան աղքատ տըղայք կան,
Որ տաք Հալաւէ կարօտ կը մնան։

* * *

Գլուխը մարմնի մասն է, ինչ դէմքը . . . Աչքը դէմքի մասն է, ինչ ծածրա՞ղը . . . Բերա՞նը . . . գոգա՞ղը . . . յեռնե՞ը . . . հղա՞ղը . . . ոտնե՞ը . . . ոտնէ՞ը . . . ճաղաղ . . . յօնքե՞ը . . . քո՞նը . . .

Ի՞նչ մասեր ունի շան մարմինը, պատմեցէ՛ք։
Ի՞նչ մասեր ունի հաւի մարմինը։—Եղնիկի՞նը։

Թռչնակ.

Մեր տան դիմաց, ծառի վերայ,
Ճնճղուկը մեծ հոգսի մէջ է.

Նա կտուցով խոտ է կրում,
Մաղ ու ծղոտ, բուրդ հաւաքում,
Իւր ձագերին տաք բուն շինում։
Արեգակը երբ դուրս եկաւ,
Ճնճղուկն իրան գործն սկսեց.
Մինչև արևն մայր մտնիլը
Եւ գործ շինեց նա և երգեց։
Երբ որ գիշերը մօտեցաւ,
Սիրուն թռչունը լուռ կացաւ,
Եւ գլուխը թևերի տակ,
Հանգիստ քնով նա քնեցաւ։
Հէնց լուսացաւ, ծէգը բացուեց,
Սիրուն ճնճղուկն նորից զարթեց,
Անուշ ձայնով, քաղցր կերպով
Իւր երգի տուտը սկսեց։

35. Ձեռների, ոտների և բնի մասերը։

Ձեռների մասերը. դաստակ, արմունգ, ուս։
Ոտների մասերը. ազդր, սրունք, գարշապար։
Բնի մասերը. կուրծք, փոր, կողեր, թիկունք, մէջք։

* * *

Դաստակը ձեռի մասն է, իսկ ա՞զդրը . . .
Կուրծքը բնի մասն է, իսկ բո՞ունը . . .
Սրունքը ոտի մասն է, իսկ ընչո՞ւնքը . . .
Ձեռքը մարմնի մասն է, իսկ գարշապա՞րը . . .

Երկու հովիւ.

Երկու հովիւ, Պետրոսն ու Կարապետը, դաշտից

միասին տուն էին գալիս։—Գիտե՞ս, Պետրոս, ասաց ընկերը, եթէ քո ունեցած ոչխարներից մէկն ինձ տաս, իմ հօտը քոնիցը երեք անգամ շատ կը լինի։—Ո՛չ, ասաց Պետրոսը. աւելի լաւ է, դու քո ոչխարներից մէկն ինձ տուր, այն ժամանակ մենք հաւասար կ՚ունենանք։

Մանուկներից ամեն մէկը քանի՞ ոչխար ուներ։

Ուլերն ու գայլը։

Լինում է, չի լինում մի այծ։ Այս այծը իւր համար անտառում մի տուն է շինում և իւր փոքրիկ ուլերով բնակվում է նորա մէջ։ Ամեն օր նա դուրս էր գնում արածելու, միայն գնալուց առաջ պատուիրում էր իւր ձագերին, որ դրսից եկողների համար դուռը բաց չ՚անեն. ինքն էլ հանդումը՝ կանաչ խոտերի մէջ արածելուց յետոյ, երեկոյին յետ էր դառնում տուն և իւր երկար կեռ պոզերով դրանը խփում էր ու ասում.

Ի՛մ ուլիկներ, փո՛քր այծուկներ,
Դէ՛հ շարժուեցէ՛ք, դուռը բացէ՛ք.
Ես գալիս եմ կանաչ դաշտից,
Աբրշումէ խոտն արածած,
Սառն աղբիւրի ջուրը խմած,
Կուրծս լիքը ձեզի համար
Կաթն եմ բերում իմ ծծերում.
Բացէ՛ք, բացէ՛ք, ձեզ եմ ասում։

Ուլերը լսում են իրանց մօր ձայնը և վազում՝ բաց են անում դուռը։ Մայրը ծիծ է տալիս նորանց և կրկին գնում է արածելու։

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը և մտքումը դնում է, որ խաբելով ներս մտնի ուլերի բնակարանն ու նորանց ուտի։ Մի օր, երբ այծը դուրս է գնում արածելու, գայլը մօտենում է նորա փարախին և սկսում է երգել, միայն թէ հաստ ու կոպիտ ձայնով.

«Ի՛մ ուլիկներ, փոքր այծուկներ,
Դէհ շարժուեցէք, դուռը բացէք,
Ձեր մայրն եկաւ, կաթը բերաւ . . . »

Ուլերը մի փոքր ականջ են դնում և իմանալով՝ որ իրանց մայրը չէ երգողը, ասում են. «Լսո՛ւմ ենք, լսում, այդ մեր մօր ձայնը չէ. մեր մայրը բարակ ձայնով ու քաղցր է մկկում։ Ասում են ու դուռը չեն բացանում։ Գայլը, սոված-ութիւնից ատամները կրճտացնելով, թոզնում է ու գնում։ Մի փոքր ժամանակից յետոյ գալիս է և մայրը. նա գովում է իւր ձագերին, որ իւր խօսքը լսել են և դուռը չեն բաց արել. «Դուք շատ լաւ էք արել, ո՛ղջիք, որ դուռը բաց չէք արել, թէ չէ նա ձեզ ամենիդ էլ կուտէր»։

Գառը և իւր մայրը։

(Մանկական երգ)

—Ինչի՞ կուլաս դու, գառնիկ։
«Խիստ ծեծ կերայ ես, մա՛յրիկ»
—Քեզ ո՞վ ծեծեց, իմ գառնիկ։
«Մէկ կախարդ պառաւ կնիկ։»
—Ինչի՞ ծեծեց քեզ, գառնիկ։
«Ծառի տակն էի, մա՛յրիկ։»

—Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ։
«Մէկ մեծ փայտով, իմ մայրիկ»։
—Ո՞րտեղից զարկեց քեզ, գառնիկ։
«Ոտիկներուս, իմ մայրիկ»։
—Ի՞նչպէս լացիր դու, գառնիկ։
«Մէ՛, մէ՛, մէ՛, մէ՛, իմ մայրիկ»։

*
* *

Գիրքը դասագիրք աստուծոյ է, իսկ ջո՞ւրը . . . Գնդակը խաղալիք է, իսկ սեղա՞նը . . . Կայենը գործիք է, իսկ խորոմա՞ծը . . . Կոշը ընդանի կենդանի է, իսկ եղնի՞կը . . . Նապաստակը վայրենի անասուն է, իսկ հապո՞ն . . . Թրջենջու

՝ խոտ է, իսկ վարդենի՞ն . . . Խնձորենին ծառ է, իսկ օ՞ձը . . . Գորգը սողուն է, իսկ մածո՞ւկը . . . Երկաթը հանք է, իսկ ծա՞ռը . . .

Փոքրիկ որբը.

Փայլուն արևը արդէն մայր մտաւ,
Լուսինն էլ վաղուց գնաց, թագկացաւ,
Փոքրիկ աստղերը ամպի տակ մտան,
Եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան։
Ամեն մարդ գնաց, իւր տունը հասաւ,
Ամեն երեխայ մօր գիրկը մտաւ։
Միայն խեղճ որբը չունի հայր ու մայր,
Չունի բարեկամ, ո՛չ քոյր, ո՛չ եղբայր.
Անտէր մնացած՝ Աստուծոյ կամքին,
Խեղճը քնած է փողոցի միջին։

36. Աչքի, բերանի, դաստակի և գարշապարի մասերը։

Աչքի մասերը. Բիբ, ծիածան, սպիտակուց, կոպեր, արտևանունք։

Բերանի մասերը. Շրթունքներ, ծնօտներ, լընդեր, ատամներ, լեզու, քիմք, կատիկ, կոկորդ, շնչափող։

Դաստակի մասերը. Մատներ, ափ, մատնամատներ։

Գարշապարի մասերը. Պատուանդան, կրունկ, մատներ, ճիտք։

Առածներ. Լեզուդ չուանի դիր։—Լեզուի տակին ոսկոր չկայ, որ սուտ ասելիս ծակի։—Սուտ ասողն տունը կրակ ընկաւ, ուչ ոք չհաւատաց։—Օձի կծածը կը սաղանայ, լեզուի կծածը չի սաղանալ։

Հանելուկներ. 1. Փոքրիկ պատուհան, շեղջով լիքը։

2. Զորս մայր կային նմանակ, ունէին հինգ հինգ զաւակ. հինգը մէկ մօր էին որդիք, հինգը նորանց եղբօր որդիք, տասն էլ մօր եղբօր որդիք։

— Այսօր խաղամ, վաղը կը սովորեմ, ասում է ծոյլը։

— Վաղը կը խաղամ, այսօր սովորեմ, ասում է ջանասէրը։

Ծոյլ աղջիկը.—«Բանն ինչ կ՝անեմ, կեղտոտ է, բամբակը կորըզոտ է, մետաքս պիտի՝ որ մանեմ, մաստակ պիտի՝ որ ծամեմ, կտերը տիտիկ անեմ, անցնողին մտիկ անեմ, ուտեմ խմեմ, մթնի քնեմ»։

Ծոյլ տղան։ Շորերս հանիր, թեք գցիր, ծածկիր ինձ ու խաչակնքիր վերաս, յետոյ ես ինքս կը քնեմ։

*
* *

Աչքը դէմդի մատն է, ինչ բիբը . . . Ականջը յետոյի մատն է, ինչ դէմդը . . . Գարշապարը ոտի մատն է, ինչ պապուանդանը . . . Դէմդը գլխի մատն է, ինչ գլուխը . . . Ծիածանն աչքի մատն է, ինչ ուչքը . . . ատամնէրը . . . լրունկը . . . ոտնէրը . . . ուղերը . . . պատուհանը . . . ծնօտնէրը . . . Մարդենին ընդի է, ինչ լեզուն . . . Կուժն ատամն է, ինչ քիմը . . . Օձը ուղղուն է, ինչ մարդը . . . յին . . . վնգերը . . . մածունը . . . ատօրը . . . քաղցրաբերանը . . .

Մէկ և երկու.

Բերան մէկ ունինք, ականջներ՝ երկու։ Ինչի։—Ինքդ հասկացիր. աւելի լսիր և սակաւ խօսիր։

Բերան մէկ ունինք, իսկ աչքեր՝ երկու։ Ինչի։—Երկուսով նայիր, երկու մտածիր, մէկ պատասխանիր։

Բերան մէկ ունինք, իսկ ձեռքեր՝ երկու։ Ինչի—Ինքդ հասկացիր. երկուսով գործիր, մէկով վայելիր։

Մայիս.

Մենք արժանացանք ուրախ մայիսին,
Ծառեր, ծաղիկներ ողջ կանաչեցին.
Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը
Ուրախ ու զուարթ առաջ վազեցին։
Տերևաշատ ծառի ստուերների տակ

Թռչուններն իրանց երգերն են երգում.
Կանաչ դաշտերի փափուկ մարգերում
Պէսպէս կենդանիք ուրախ արածում։

Տարուայ ո՞ր եղանակն է նկարագրվում այստեղ։
Ո՞ր ամսին արժանացանք։
Ի՞նչով է ուրախացնում մեզ մայիսը։
Ի՞նչ է պատահում ծառերին եւ ծաղիկներին։
Ի՞նչ է տեսնվում երկնքում։
Ի՞նչ է լսվում ծառերի ստուերներում։
Ի՞նչ է տեսնվում կանաչ մարգագետիններում։
Որեմն որո՞նք են գարնան նշանները։

ՈՉԽԱՐ.

I.

Գարնան վերջերում հովիւը խուզեց իւր ոչխարները։ Դեռ ցուրտ էր եւ խեղճ կենդանիները դողդողում էին։

Աստուած խղճաց ոչխարների վերայ եւ աշխարհ ուղարկեց արեւի տաք ճառագայթներն ու ջերմ քամին։ Ոչխարները տաքացան եւ ուրախ ուրախ վազեցին դէպի դաշտը. իսկ աշունքադէմ նորանց բուրդը նորից դուրս եկաւ։

II.

Մանուկներն ամբողջ ամառ ուրախ զուարթ խաղում էին։ Ձմեռն եկաւ եւ նորանք չ՝կարողացան առաջուայ պէս շուտ շուտ դուրս վազել։ Տխուր նստոտած էին լուսամուտների առաջ եւ նայում էին դէպի դուրս, ուր ձիւնը քուլայ—քուլայ էր անում։ Մայրը գնեց ոչ-

խարի բուրդ, թել մանեց եւ փափուկ գուլպաներ ու թաթմաններ գործեց իւր որդոց համար. յետոյ շալ գործեց եւ նորանց համար շորեր կարեց։ Անուշհետեւ մանուկները՝ տաք հագնուած լինելով, համարձակ դուրս վազեցին եւ ուրախ զուարթ սկսեցին ձնագունտի խաղալ։

*
* *

Գրոհ են գրչով, հարհ են . . . հարդհ են . . . վարհ են . . . մոն են գալիս . . . հալսում են . . . Արջով վարհ են, իսկ մարիարոզ . . . Հայն ուրհ են, իսկ հոլը . . . Սեղանը շինում են գայրից, իսկ պոնը . . . Հայը ընում են ալի-բից, իսկ գինին հում են . . .

Զորս ցանկութիւն։

1. Ձմեռն էր։ Գետը ծածկուել էր սառուցով։ Գարեգինն իւր ընկերների հետ խաղում եւ սղղում էր հաստ սառուցի վերայ։ Բաւական խաղալուց յետոյ՝ նա ուրախ ուրախ տուն վազեց եւ ասաց իւր հօրը. «Ա՜խ, հայրիկ, ի՜նչ պատուական եղանակ է ձմեռը, որքան ուրախութիւններ ենք անում մենք՝ ձնագունտի ենք խաղում, սղղում ենք սառուցի վերայ, սահնակներով զբօսնում ենք . . . Ա՜խ, ի՜նչ կը լինէր՝ որ միշտ ձմեռ լինէր։ Հայրը հանեց ծոցի տետրակը եւ ասաց. «Գրի՛ր սորա մէջ քո ցանկութիւնը»։ Գարեգինը գրեց։

2. Ձմեռն անցկացաւ. գարունը եկաւ։ Բացուեցան ծառերի ծաղիկները. բարձրացան դաշտերի խոտերը. ամենայն տեղ ոստոստում էին հազարաւոր թիթեռներ եւ բզեզներ։ Գարեգինը դուրս գնաց դաշտը, ծաղիկներ քաղեց, թիթեռներ բռնեց, իսկ երբ երեկոյեան տուն եկաւ,

ասաց հօրը. «Պէտք է իմանաս, հայրիկ, թէ որքան ուրախացայ ես այսօր։ Ճշմարիտ, շատ հիանալի եղանակ է գարունը, և եթէ ինձ մնար, ես կը ցանկանայի, որ միշտ գարուն լինէր»։ Հայրը հանեց տետրակը և առաջարկեց Գարեգնին, որ իւր ցանկութիւնը գրէ։ Գարեգինը գրեց։

3. Ամառնացաւ։ Դաշտերի խոտը հասել էր և հնձող էր կանչում։ Գարեգինը և իւր հայրը գնացին խոտ հընձելու։ Քանի որ հայրը վեր էր տալիս անուշահոտ խոտը, Գարեգինն իրան զուարճութիւններն էր կատարում. ձուկն էր բռնում գետակից, հատապտուղներ էր հաւաքում, հոտաւէտ խոտերի վերայ գլորվում էր։ Երեկոյին՝ տունն յետ դառնալիս, նա ասաց իւր հօրը. «Ահա այսօր ես անչափ ուրախացայ։ Երանի թէ ամառը վերջ չունենար»։ Գարեգնի այս ցանկութիւնն էլ գրուեցաւ տետրակի մէջ։

4. Վերջապէս եկաւ և աշունը։ Այգիներում լաւ լաւ պտուղները հասել էին՝ խնձորը, տանձը, սալորը, սերկևիլը, խաղողը . . . Մարդիկ դուրս էին եկել այգեկութի։ Գարեգինն էլ իւր ծնողաց հետ գնաց այգի և քաղն սկսեցին։ Պէտք էր տեսնել, թէ ինչպէս էր վազվզում նա մէկ ծառի տակից դէպի միւսը, ծիծաղում, երգում, խաղում և պտուղներից բերանը դցելով՝ անուշ անում։ Վերջը նա վազեց իւր հօր մօտ և նորա պարանոցովը փաթաթուելով՝ ասում էր. «Հայրիկ, աշունը տարուայ ամենալաւ եղանակն է անկասկած»։

Այն ժամանակ հայրը հանեց փոքրիկ տետրակը և ցոյց տուեց, որ նա միևնոյն բանն է ասել գարնան, ձմեռուան և ամառուան համար։

Պատմեցէ՛ք մեր բառերով այս պատմութիւնը. ասացէ՛ք թէ քանի զիսաւոր կտորների կարող էր բաժանել սորան եւ ի՞նչ է ասուած իւրաքանչիւր կտորում։

37. Ինդ զգայարանք.

Աչքով տեսնում ենք առարկան. ականջով լսում ենք նորա ձայնը. քթով նորա հոտն ենք իմանում, լեզուով—համը, իսկ մատներով շօշափում ենք և իմանում նորա պնդութիւնը, փափկութիւնը, թանձրութիւնը, նօսրութիւնը, սառնութիւնը, տաքութիւնը, հարթութիւնը, անհարթութիւնը . . .

—

Տեսողական գործարանն աչքն է. լսողական գործարանը . . . հոտառական գործարանը . . . շօշափողական գործարանը . . . ճաշակի գործարանը . . .

Առածներ. Ականջն էնդուր չի մեծանում, որ շատ բաներ է լսում։—

Անհունար մարդու լեզուն երկար կը լինի։—

Ուրիշի աչքը քեզ համար լոյս չի տալ։

Հանելուկ. Փետուրով կը ցանեն,
Աչքով կը քաղեն,
Գլուխով կ՚ուտեն,
Մաքով կը մարսեն։

Խրատ. Մի խնդրիր Աստուծուց ոչ փող, ոչ պատիւ,
Այլ քեզ կրթելու խելք, շնորհք, սիրտ ազնիւ։
Երբէք մի պարծենար՝ թէ արդէն գիտուն ես,
Որքան շատ սովորես, այն է օգուտ քեզ։
Ընկերներիդ օգնող եղիր, աղքատներին սէր ցոյց տուր.
Տէրն ասում է՝ չէ անվարձ նաև բաժակ մի ցուրտ ջուր։

Կաղն ու կոյրը։

Կաղն ու կոյրը պէտք է անցկենային մի սրընթաց առուակով։ Ի՞նչպէս անէին։ Կոյրը կաղին շալակեց և երկուսն էլ ապահով անցկացան։

Փոքրիկ գառնուկը։

Մէկ փոքրիկ գառը՝ ձիւնի նման մաքուր սպիտակ,
Մէկ օր գնաց իւր մօր հետ դաշտը, որ արածի,
Եւ իւր կամքին սկսեց թռչել քարերի տակը.
Զէր ուզում որ փոքր միջոց հանգիստ նստի։
Դարիվեր, դարիվար վազվզում էր անխոհեմը.
Թէ քար, թէ փայտ, թէ խոտ, թէ ձոր, բնաւ չէր նայում։
Ո՛րդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նորա մայրը,
Զգոյշ կացէ՛ր, որդեակ, լսէ՛ր իմ խրատը։
Բայց գառնուկը հէնց խաղում էր ու թռչոտում,
Եւ դարիվեր ու դարիվար միշտ վազվզում։
Վերջն, երբ գառը իւր մօր խօսքին ականջ չարաւ,
Սարի գլխին իւր գժուլթեան պատիժն առաւ.
Մի մեծ քար կար այնտեղ ընկած, որի վրայով
Մեր գառնուկը խաղ էր անում թռչոտելով.
Մէկ էլ տեսնես, ոտի մէկը տակովն եղաւ,
Քսան տեղից կտոր կտոր փշրուեցաւ։

Առած. Մեծի ասած, փորրի լսած։—Ասողին էլ լսող պիտի։

Կաղնէ՞ ծառ է, իսկ մասրէ՞ ընտ է.—Ձի՞ն չորոտոտնէ կէնդանի է, իսկ ծիծեռնա՞կը . . . Բահը գործիք է, իսկ բաղեանը՞ . . . Գոտակը խաղալիք է, իսկ ելա՞ը . . . Քոնոնը

գառանցան առարկայ է, իսկ մո՞ւրճը . . . Բուրը ընչե՞ն է, իսկ օ՞ձը . . . Կաղամբը բանջարանոցի բոյս է, իսկ ցորենը . . . Ա՛ւոյրը խոտ է, իսկ սխտո՞ը . . . Երկաթը հանք է, իսկ բընկնը՞ . . . Ա՛ւ՛ծը վայրենի գազան է, իսկ ո՞՛ղը . . . Տա՛ւէնը ցո՛ւն է, իսկ գո՞ւրը . . . աղա՛ւէսը . . . խո՞ղը . . . գարնի՞ն . . . գինի՞ն . . . բաժա՞կը . . . տնկի՞նը . . . ան-ղա՞նը . . .

38. Մարդիկ, կենդանիներ, բոյսեր, հանքեր։

Մարդիկ. հայր, մայր, եղբայր, քոյր, հօրեղբայր, քեռի, հօրաքոյր, մօրաքոյր, ծերունի, պառաւ, մանուկ, տղայ, աղջիկ, կին, վաճառական, աղքատ . . .

Կենդանիներ. գազաններ, թռչուններ, ձկներ, սողուններ, միջատներ, խեցգետիններ, սարդեր։

Բոյսեր. ծառեր, թփեր, հացաբոյսեր, խոտեր, բանջարեղէններ, սունկեր, մամուռներ։

Հանքեր. մետաղներ, քարեր, հողեր, աղեր։

* * *

Առածներ. Ինչ չի ծնում, նա չի մեռնում։—Երկաթը տաք տաք կը ծեծեն։—Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է։

Հանելուկ. Ի՞նչ բան է այն, որ առաւօտեան չորս ոտի վրայ՝ մանգալիս, ճաշին երկու, իսկ երեկոյեան երեք։

Շուտասելուկ. Ծիտը ծմրան ծէրին, ծտի ծուտի ծիտը ծուռ։

* * *

Աշխարը մարդ է . . . ընթը . . . ընչընը . . . գիրը . . . արդը . . . ձիրը . . . մանուրը . . . էրձիրը . . . եղբայրը . . . ծառը . . . մամուռը . . . ուռենը . . . գաղարը . . . ընչընը . . . խոտը . . . աշը . . . հայրը . . . օրիորդը . . . ձեռաշը . . . ուշանը . . . հոշը . . .

ՊՍԱԿՆԵՐ.

(պարերգ)

Մէկ սիրտ լինինք
Եւ մէկ հոգի.
Միութիւնը
Գեղեցիկ զարդ է կեանքի։
լա, լա, լա, և այլն։

Ինչ խաղն մէջ
Որ գոհ լինինք,
Միշտ պէտք ունինք
Թէ միութեան, թէ սիրոյ։
լա, լա, լա, . . .

ՇՈՒՇԱՆԷ ՊՍԱԿ.

Օրինակ անմեղութեան,
Դաշտի սիրուն դու շուշան,
Ե՛կ, զարդ եղիր մեր պարին,
Ե՛կ միացիր մեր երգին։
լա, լա, լա, և այլն։

ՎԱՐԴԷ ՊՍԱԿ.

Վարդ ծաղկին լինինք նման
Եւ օրինակ հեզութեան,
Թող վարդը հանգստանայ
Մեր մատաղ սրտի վրայ։
լա, լա, լա, և այլն։

ԿԱՂՆԵԱՑ ՊՍԱԿ.

Կանաչ խոտը դաշտերի
Մեր սրտին է սիրելի.
Թող Ճիւղը կաղնի ծառին
Պսակ լինի մեր գլխին.
լա, լա, լա, և այլն։

ՄԱՆՈՒՇԱԿԷ ՊՍԱԿ.

Աղնիւ սիրուն մանուշակ,
Համեստութեան օրինակ,
Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,
Քո քնքոյշ հոտ անուշիկ։
լա, լա, լա, և այլն։

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ.

Սիրուն կանաչ պսակին
Թող միանանք, բարեկամք,
Եւ յոյսերը անբաժան
Մնան մեզանից յաւիտեան։
լա, լա, լա, և այլն։



Արջի թաթը.

Գիւղացիք թակարդ սարքեցին և մի արջ բռնեցին։ Արջին սպանելով չ՝սպանեցին, միայն կացնով նորա թաթը կտրեցին։ Երեք ոտնանի արջն էլ կաղի տալով փախաւ, գնաց։ Մի խեղճ պառաւ խնդրեց, որ արջի թաթը իրան տան, խուզեց նորա վերայի մազը և կաշին էլ մաշկեց։ Պառաւը միսը կրակին դրեց եփելու, ինքն էլ նստեց կաշուի վերայ և սկսեց մանել նորա մազը։ Մանեց-մանեց մինչև կէս գիշեր։ Կէս գիշերին՝ մէկ էլ տեսնես, մի ձայն է լսում՝ մի բան լուսամուտի տակ թրմ-թրմ-փացնում, չըղկչըղկացնում է։

Պառաւը լուսամուտից դուրս մտիկ տուեց և վախից քար դարձաւ. տեսնում է, որ երեքոտանանի արջը՝ փայտի վերայ գլխիկը տալով, բարձրանում է և մրրթմրրթում.

ԴԷՀ բարձրանամ, բարձրանամ,
Լորենի ոտի օգնութեամբ,
Հոնի փայտի օգնութեամբ.
Արարած աշխարհ քնել է.
Ջուրն էլ վաղուց դադարել է.
Ամեն մարդ քնած է շէնում,
Ամեն մարդ քնած է գիւղում.
Միայն պառաւը չէ քնած.
Իմ կաշիս իւր տակը գցած,
Իմ բրթից նա թէլ է մանում,
Իմ մսից կերակուր եփում։

Պառաւը շատ վախեցաւ, որովհետև նա կենում էր մեն—մենակ գիւղի մի ծայրում։ Ի՞նչ անէր, ի՞նչ չ՝անէր, արջից ի՞նչպէս ազատուէր։ Արջը քիչ էր մնացել, որ ներս մտնէր. նա արդէն ձեռնափայտով թրխկ—թրխկացնում էր։ Պառաւը թոնրի բերանը բաց արեց ու ինքը բարձրացաւ ամբարի գլուխը։ Արջը տրփտրփելով դուռը գտաւ, կրընկահան արեց, ներս մտաւ խրճրթի մէջ և սկսեց մթնումը պտուտ պտուտ անել. մին էլ տեսնես—թրը՛մփ—թոնրի մէջն ընկաւ։

Պառաւը շուտով ցած թռաւ ամբարի գլխից, ծածկեց թոնրի բերանը և գնաց հարևաններին կանչեց։ Հարևաններն եկան և արջին սպանեցին։

39.

Ամիսներ. Յունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր։

Ձմերային ամիսներ. Դեկտեմբեր, յունվար, փետրվար։

Ամարնային ամիսներ . . .

Աշնանային ամիսներ. Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր։

Գարնանային ամիսներ . . .

Նոր տարի։

Ահա հասաւ նոր տարի,
Հետը բերեց նոր բարի—
Մանրը տղոց՝ ուրախ օր,
Բարի գաւակ՝ հօրն ու մօր։
Մանրը տղայքն են ուրախ,
Ունին կաղին, կոզինախ,
Սալորի չոր, չամիչ, թուզ,
Փրշատ, ունաբ ու ընկուզ։
Մանրը տղայք, չը մոռնաք
Աշխարհումս չէք մենակ.
Ուրիշ շատ խեղճ տղայք կան
Աղքատ և ան-օգնական
Նոքա հայր ու մայր չունին,

Սև չոր հացի կարօտ են.
«Աղքատներին ողորմած
Եղէք», կասէ ձեզ Աստուած։

*
* *

Յունվարը ցմերայնի ամիս է, իսկ մայիսը . . . Սեպտեմբերը աշնանային ամիս է, իսկ փետրվարը . . . մարտը գարնանային ամիս է, իսկ յունիսը . . . Յուլիսը ամարային ամիս է, իսկ հոկտեմբերը . . . ապրիլը . . . օգոստոսը . . . դեկտեմբերը . . . նոյեմբերը . . .

*
* *

Տարին քա՞նի ամիս ունի։ Ո՞րն է առաջին ամիսը. Ո՞րն է վերջինը։ Ո՞րոնք են գարնանային ամիսները։ Ասացէ՛ք ամարային ամիսները։ Ո՞րն է աշնանային վերջին ամիսը. դա ո՞ր եղանակի ամիս է. ո՞ր երորդն է. . .

Մայիսին.

Երբ մայիսին ես անցնում եմ անտառով,
Գեղեցկագոյն թռչուններ շատ եմ տեսնում.
Ամեն մէկը ուրախութեամբ երգելով՝
Աշխատում է տաք բուն շինել թփերում.
Երբ անցնում եմ ես ծաղկապատ դաշտերում,
Շատ թիթեռներ և բզեզներ եմ տեսնում.
Սև ու սպիտակ և հազար մի գոյներով,
Ծաղկից ծաղիկ թռչոտում են, ծլվլում։
Ա՜խ, շատ սիրուն, շատ գեղեցիկ է դաշտը,
Որի վերայ ոչխար տաւար և այծեր
Ամեն կողմից բառաչում են ու մայում
Եւ ինձ իրանց աշխոյժ ձայնով գրաւում։

Մեղուներ.

Գարունն սկսուեցաւ. արեգակը հալեցրեց դաշտերի ձիւնը. հին՝ դեղնած խոտերի մօտ դուրս եկան նոր նոր կանաչ բողբոջներ. ծառերի կոկոնները բացուեցան և փոքրիկ տերևներ առաջ բերին։

Ահա մեղուն էլ զարթեցաւ ձմերային քնից, սրբեց աչերը իւր բրդոտ թաթիկներով, զարթեցրեց ընկերներին և միասին դուրս նայեցին լուսամուտից, որ տեսնեն թէ ձիւնը, սառուցը և հիւսիսային սառը քամին անցել են։

Մեղուները տեսնում են, որ արեգակը փայլում է, որ ամեն տեղ տաք է և լոյս. նորանք դուրս են գալիս փեթակից և թռչում են դէպի ծիրանի ծառը։

«Սիրուն ծիրանենի, չունիս մի բան խեղճ մեղուներիս համար. մենք ամբողջ ձմեռ քաղցած ենք»։

—Ո՛չ, պատասխանում է ծիրանի ծառը. դուք շատ շուտ էք դուրս եկել. իմ ծաղիկները դեռ ևս պահուած են կոկոններիս մէջ։ Գնացէ՛ք նշենուն հարցրէ՛ք։

Մեղուները թռան գնացին նշենու մօտ. «Սիրելի նշենի, արդեօք մի բան չունիս սոված մեղուներիս համար»։

—Վաղը եկէ՛ք խնդրեմ, պատասխանում է նորանց նշենին. այսօր ինձ վերայ ոչ մի բացուած ծաղիկ չ՝կայ. իսկ երբ կը բացուին, ես մեծ ուրախութեամբ կ՝ընդունեմ ձեզ։

Թռան մեղուները կակաչի մօտ, նայեցան նորա փայլուն գլխին, բայց նա էլ ոչ հոտ ունէր և ոչ մեղր։

Մեղուները տրտում և քաղցած կամենում էին յետ

դառնալ տուն, բայց տեսան թփի տակ մի քնքոյշ մուգ կապուտ ծաղիկ։ Սա մանուշակն էր։ Նա բաց արաւ մեղուների համար իւր կոկոնները, որոնք լիքն էին անուշ հոտով և քաղցր հիւթով։ Կելան—խմեցին մեղուները և ուրախ զուարթ յետ դարձան տուն։

Հոկտեմբերին.

Արևն իւր ոյժը կորցրած՝
Ամպերի տակ ծածկուեցաւ,
Սաստիկ քամին ողջ ծառերի
Տերևները վեր ածաւ։
Շատ թռչուններ և թիթեռներ,
Անյայտացան դաշտերից.
Ծառը չունի կանաչ տերև,
Նա զրկուած է իւր զարդից։

Երկնքումը ամպի քուլէքն
Անձրևներ էր պատրաստում,
Անտառը իւր տերևներով՝
Առուն տխուր քչքչում։
Ինչի՞ դաշտերի սողուններ
Եւ վայրենի թռչուններ
Շտապում են իրանց համար
Մի ապահով տեղ գտնել։

*
* *

Աչքը է տիկը դէմքի մասերն են, իսկ ականջը է ուրո՞նքը. . . Դաստակը է արմունկը ձեռքի մասերն են, իսկ ճուրծքը է փո՞ը. . . Գլուխը է պարանոցը մարմնի մասերն են, իսկ սպիտակուցը է ծիածա՞նը. . . Բիբը է արտանուշը աչքի մասերն են, իսկ ատամները է լեզո՞ւն . . . Մարտը է ապրիլը գարնանային ամիսներ են, իսկ սեպտեմբերը է հոկտեմբե՞ը . . . Յունիսը է յուլիսը ամարային ամիսներ են, իսկ յունվարը է փետրվա՞ը . . . Գայլը է արջը գազաններ են, իսկ ծառը է խո՞տը . . . Սունկը է ծաղիկը բույսեր են, իսկ աղը է երկա՞թը . . . Սեղանը է պահարա՞նը . . . Արծիվը է թռչո՞ւնը . . : Կաթը է ջո՞ւրը . . . Գրիչը է մատի՞ը . . . Կիրակին է երկուշաբթի՞ն . . . Գարունը է ձմե՞ռը . . .

Կիրակնամուտ։

Իրիկնաժամի զանգակը տուին,
Բարեպաշտ մարդկանց ժամ հրաւիրեցին.
Վաղը կիրակի՝ Աստուծու օրն է.
Վերջացրէք գործերդ, հանգստեան ժամն է։
Լսեց գիւղացին դաշտումն այս ձայնը,
Դէպի տուն քշեց եզն ու գութանը։
Գիւղական փոքրիկ պարզ եկեղեցին
Լցուած մարդիկը աղօթում էին.
Դառը քրտինքով գնած մոմերը
Սուրբերի առաջ մեղմ վառվում էին։

Վախկոտ Յովհաննէսը։

Յովհաննէսի մայրը տաշտումը խաշ հունցեց և դրեց վառարանի մօտ, որ քացախի, իսկ ինքը գնաց հարևանի տուն։

Յովհաննէսը մթնով տուն դարձաւ, կանչեց, ձայն տուեց,—մարդ չ՚կար։ Յետոյ նա կամեցաւ կրակ վառել, բայց երբ վառարանին մօտեցաւ, պճպրճոցի ձայն լսեց։ «Երևի քաջք է», մտածեց Յովհաննէսը և վախից սկսեց փախչիլ։ Հակառակի պէս՝ փախչելիս, կրակախառնիչը ոտովն ընկաւ և նորա ծայրը ճակատին դիպաւ։ «Վա՛յ, Աստուած, վա՛յ, օգնեցէք, օգնեցէք», գոռաց Յովհաննէսը և կամենում էր դուրս վազել տանից. բայց դուրս վազելիս՝ տրեխի ծուալը դրան տակովն եղաւ և Յովհաննէսը փռուեցաւ շեմքի վերայ ու ողբալի ձայնով գոռում էր. «Վա՛յ, Աստուած, վա՛յ, օգնեցէք, ազատեցէք. քաջքը բռնել է ինձ»։

Հարևանները լսեցին այս գորգոռոցի ձայնը, եկան, բարձրացրին կիսակենդան Յովհաննէսին, բայց երբ իմացան, թէ բանն ինչումն է, սկսեցին նորա վերայ ծիծաղել։ Յետոյ շատ երկար ժամանակ ամենքը բարկացնում էին Յովհաննէսին և ասում՝ թէ նա ինչպէս վախեցաւ տաշտի խմորից, անկիւնում դրած կրակախառնիչից և իւր տրխի ծուպերից։

«Յուրը» ծառ։

Ելնեմ ծառը զարդարեմ,
Վերգամ տակը մխիթարեմ.
Հաւի վառիկը մորթեմ,
Տանեմ գետը լուանամ,
Եփեմ ու չորանին տամ,
Զորանն ինձ մի ոչխար տայ,
Ոչխարըն Աստուծուն տամ,
Աստուած ինձ մէկ եղբայր տայ։
Ե՛ղբայր, եղբայր, ջան եղբայր,
Ջանըս քեզ մատաղ, եղբայր.
Կաբայ եմ կարել, կարճ է եկել,
Բուզմայ եմ շարել, խոչ է եկել,
Ճնճղուկի լեզուն մեղրով
Քեզ համար եմ տապակել։

40. Մարդիկ հասակներին և պարապմունքներին համեմատ։

Մանուկ. Պատանի. Երիտասարդ. Ծերունի. Պառաւ.

Վաճառական. Արհեստաւոր. Զօրական. Քահանայ. Աստիճանաւոր. Պարտիզպան. Մուրացկան . . .

*
* *

Առածներ. Աղքատն ունի հաց ու պանիր, գիշերը քունը չի տանիլ։—Աղքատ ու հպարտ։—Դարբնին դանակ չի լինիլ, ջուլհակին պատան։—Երեխին ասին՝ ինչի՞ ես լալիս, ասաց՝ խոսքս անց ա կենում, էնդուր։

Հանելուկ.

Ծեր Օհանը դուրս եկաւ դաշտը. շարժում էր իւր թևերը և միշտ նորանցից թռչուններ էր դուրս թողնում։ Նա շարժեց չորս անգամ և դուրս արձակեց ընդամենը տասներկու թռչուն։ Երբ թռան—գնացին առաջին երեքը, ցուրտն սկսեց, գետերը սառան, մարդիկ մրսեցան։ Երբ թռան երկրորդ երեքը, օդը մեղմացաւ, ձիւնը հալուեցաւ, խոտերը կանաչեցին, ծառերը ծաղկեցան։ Երբ թռան երրորդ երեքը, եղանակը տաքացաւ, շոգերն սկսեցին, արտերն ու պտուղները հասան։ Երբ դուրս թռան մնացած երեքը, փչեց սառը քամին, սկսեցին անձրևներ և մառախուղներ։

Ծերունու թռչունները հասարակ չէին. նորանցից ամեն մէկը ունէր չորս թև, իւրաքանչիւր թևի վերայ կար եօթը փետուր, իսկ փետուրների մի կողմը սև էր, միւսն սպիտակ։ Ամեն մէկ թռչուն, իւրաքանչիւր թև և ամեն փետուր իւր անունն ունէր։

Ի՞նչ է լինում դարնանը օդի մէջ, գետերում, դաշտերում, անտառներում։

Ի՞նչ է լինում ամառը . . .
Ի՞նչ է լինում աշնանը . . .
Ի՞նչ է լինում ձմեռը . . .

Օրօրոցի երգ.

Քուն եղիր, բալաս, աչքըդ խուփ արա՛,
Նախշուն աչերուդ քուն թո՛ղ գայ վերայ.
Օր—օր—օր բալաս, օր—օր ու նանի,
Իմ անուշ բալիս քունը կը տանի։
Ոսկի խաչ վըզիդ՝ քեզի պահապան.
Նարօտ կապել է ծարէն տէր բարան.
Օր—օր—օր բալաս, օր—օր ու նանի,
Իմ Ռուբէնիկիս քունը կը տանի։
Մաւի հիլուններ կախել եմ ես ալ.
Նազար չես առնուլ, քուն եղիր, մի լար.
Օր—օր—օր . . . .
Այս քանի մօրըդ անքուն աչքովը
Անցել է օրեր օրրոցքիդ քովը.
Օր—օր—օր . . . .
Օրրոցքըդ օրրեմ, օրով բոյ քաշես,
Մըղկտան ձայնով սիրտս չը մաշես.
Օր—օր—օր . . . .
Դուն ալ քուն եղիր, ինձի ալ քուն տո՛ւր,
Սուրբ Աստուածամայր մանկիկիս քուն տո՛ւր.
Օր—օր—օր բալաս . . . .

ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ԱՐՋԸ.

I.

Գիւղացին և արջը բարեկամացան և միասին խոր-հուրդ արին, որ կարտոփիլ ցանեն։ Գիւղացին ասաց. «Ա՛րջ բարեկամ, արմատն ինձ, գլուխը քեզ»։ Արջը հա-մաձայնեցաւ։ Շատ լաւ կարտոփիլ դուրս եկաւ։ Գիւղա-ցին վեր առաւ արմատի կարտոփիլները, իսկ վերևի չո-փերը տուեց արջին։ Արջը շատ էլ փընթփընթաց, բայց ի՞նչ կարող էր անել։

II.

Միւս տարի գիւղացին նորից ասաց արջին. Ա՛րջ եղբայր, արի՛ էլի միասին ցանք անենք։

—Լա՛ւ, պատասխանեց արջը. միայն այս տարի ես արմատը կը վերառնեմ, իսկ դու վերցրո՛ւ վերևի մասը։

Գիւղացին համաձայնեցաւ, բայց այս անգամ կար-տոփիլի փոխանակ ցորեն ցանեց։ Շատ առատ ցորեն դուրս եկաւ։ Գիւղացին վեր առաւ հասկերը, իսկ արջին մնաց արմատները։

Ի՞նչ բոյսեր գիտէք, որոնց արմատն ենք ուտում։
Ի՞նչ բոյսեր գիտէք, որոնց վերին մասն ենք ուտում։

41. Տօներ։

Աստուածամօր ծնունդը. Աւետումն. Քրիստոսի ծը-նունդը. Մկրտութիւնը. Տեառնընդառաջ. Ծաղկազարդ կամ Քրիստոսի Դալուստը. Զատիկ կամ Սուրբ Յարու-

Թիւն. Համբարձումն. Հոգեգալուստ. Վարդավառ. Վերափոխումն Աստուածածնի. Խաչվերաց . . .

Աստծնէր. Կարմիր ձուն զատիկն կը սազի։—Տարին մի զատիկ, այն էլ նաւակատիք։—Աղուաւի բերանով վարդավառին ձիւն կը գայ։

Հանելուկներ. Երեք ոտքէն, մէկ մօրուսէն, կայներ կ'ուտէ մեր հօր քիսէն։—Երկէն աղիք, ծէրը ծաղիկ։

Նուրին.

Նուրին—Նուրին եկել է,
Ամբահուրին եկել է,
Շելա շալիկ հագել է,
Կարմիր գօտիկ կապել է.
Եղ բերէք պորտը քսենք,
Ջուր բերէք գլխին ածենք,
Մեր Նուրինի փայը տուէք,
Ուռենք, խմենք, քէֆ անենք։

Ճչանակ.

Ճը՜ռ, Ճը՜ռ, Ճչանակ,
Աստուծոյ դուռը բանանք,
Դուրսը ժամ ասենք,
Սև եզը մատաղ անենք,
Պոզերը չարդախ անենք,
Տակը նստենք քարգահ անենք։
Ներս գանք, պատարագ անենք։

Սուրբ Սարգսի երգը։

Ալելուիա, ալելուիա.
Հրրէս եկաւ մի ձիաւոր,
Լախտը ձեռին քաջ ձիաւոր,
Աջու ձեռին Աւետարան,
Ձախու ձեռին Սաղմոսարան,
Աջով գրէր, ձախով ջընջէր,
Ձախով գրէր, աջով ջընջէր.

Բարեկամ, երեխայիդ անունն ինչ է։
Ձեր . . . թախտին նստի,
Փափուկ ձեռը ջէրը տանի,
Հինգ աբասին ջէրից հանի,
Սուրբ Սարգսին մատաղ անի։

ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ՈՐՍՈՐԴԸ։

I. Գիւղացու վիշտը.

Գիւղացին իւր ցաւերը գանգատ արաւ որսորդին՝ թէ աղուէսը գողացել է նորա հաւանոցից երկու հաւ և մի բադ, թէ նա ամենևին չի վախենում շանից, որ բացումը կապած՝ ամբողջ գիշեր հաչում է, իսկ երբ թակարդ է սարքում և վերան էլ փափուկ մսի կտոր է դընում, առաւօտը տեսնում է, որ խորամանկ կենդանին պտոյտ է արել թակարդի չորս կողմով, իսկ մսին ձեռք տալ էլ չի կամեցել։ Որսորդն ականջ դրեց գիւղացու գանգատին և ասաց. լաւ, այժմ մենք կը տեսնենք, թէ մեզանից ով աւելի խորամանկ է։

II. Որսորդի դիտաւորութիւնը.

Ամբողջ օրը որսորդը հրացանն ուսին, շունը յետեւից, ման էր գալիս աղուէսի հետքերովը, որ պարզ երևում էին ձիւնի վերայ, և կամենում էր իմանալ, թէ որտեղից է գալիս նա բադը։ Ցերեկը այդ խարդախը քնում էր իւր որջի մէջ, ոչինչ չէր իմանում.—ահա այդ ժամանակ պէտք էր բանը սարքել։ Որսորդը նորա ճանապարհի վերայ մի փոս փորեց, փոսի երեսը ծածկեց

տախտակներով, վերան հող ածեց, հողի երեսից էլ ձիւն։ Մի երկու քայլ հեռու՝ նա ձգեց սատկած ձիու մսի կտոր։ Երեկոյեան նա հրացանը ձեռին մտաւ իւր պատրաստած փոսի մէջ և այնպէս նստեց, որ ամեն բան տեսնի և արձակելն էլ յարմար լինի.—նստեց և սպասեց։

III. Աղուէսի զգուշութիւնը.

Մթնեց։ Լուսինը դուրս եկաւ։ Զգուշութեամբ, իւր շուրջը նայելով և ականջ դնելով դուրս սողաց աղուէսը իւր որջից, բարձրացրեց ցռուկը և հոտ քաշեց. կենդանին զգաց ձիու մսի հոտը, վազեց մեղմ ընթացքով դէպի այն տեղը և յանկարծ կանգնեց, ականջները սրեց. տեսաւ խորամանկը, որ այդ տեղ նոր ածուածք կայ, որ երեկ չ՝կար։ Այս ածուածքը, ինչպէս երևում է, նորան անհանգիստ էր անում։ Նա սկսեց հեռուից պտտել այդ ածուածքի շուրջը՝ հոտոտեց, ականջ դրեց, գետնից կպաւ և երկար նայեց մսին, այնպէս որ մեր որսորդը ամենևին չէր կարող արձակել հրացանը—հեռու էր։

IV. Ով ում խաբեց։

Մտածեց-մտածեց աղուէսը և, յանկարծ, ամենայն արագութեամբ վազեց անցաւ ածուածքի և մսի մէջ տեղովը։ Որսորդն զգուշացաւ, հրացանը չ՝արձակեց։ Նա հասկացաւ, որ խորամանկ կենդանին փորձ է փորձում, թէ արդեօք ոչոք չ՝կայ նստած ածուածքի յետևը, և եթէ նա արձակէր հրացանը, կարող էր սխալուիլ և նորան էլ աչքով—երազով չէր տեսնիլ։ Այս փորձից յետոյ ա-

ղուէսը միամտվում է. ածուածքը նորան էլ չի վախեցնում. համարձակ քայլերով մօտենում է նա մսին և ուտում է ամենայն գոհունակութեամբ։ Այդ ժամանակ որսորդը իւր թագկացած տեղից զգուշութեամբ նշան է դնում, և—բը՞մբ—արձակում է հրացանը։ Աղուէսը գըլխագլոր է գալիս ու սատկում։

ՀԱՒԸ ԵՒ ԲԱԴԻ ՎԱՌԻԿԸ

1. Պառաւը հաւանոցում.

Առաւօտը շատ վաղ՝ պառաւը գնաց հաւանոցը մի քթոց ձեռքին։ Քթոցի մէջ խոտ էր ածած, իսկ խոտի վերայ դարսած էր տասներեք հատ ձու։ Պառաւը դրեց քթոցը մի տաք տեղ և նորա վերայ թուխս նստացրեց մի գանգրաւոր հաւ։ Հաւանոցը մութն էր և պառաւը չ՝կարողացաւ նկատել, որ ձուերից մինը քիչ փոքր էր միւսներից և ոչ թէ սպիտակ, այլ կանաչաւուն։

2. Ի՞նչ դուրս եկաւ ձուերից։

Հաւը ճշտութեամբ նստեց ձուերի վերայ. միայն վէր էր կենում կուտ ուտելու և ջուր խմելու և նորից վազում էր իւր տեղը։ Անցկացաւ երեք շաբաթ, և ձուերի միջից սկսեցին վառիկներ դուրս գալ. ձագը ներսից կտուցով խփում էր ձուի կեղևին, կոտրում էր նորան, դուրս էր սողում և խկոյն վազում էր ճիճուներ որոնելու։ Կանաչաւուն ձուից ամենից ուշ ձագ դուրս եկաւ և դուրս եկածն էլ ամենևին նման չէր միւսներին։ Նա կոլոր էր, աւելի բրդոտ, դեղին, ոտները կարճ—կարճ,

քիթը լայն, մանգալիս էլ օրօրվում էր, այս ու այն կողմն էր ընկնում։ Տեսնում է հաւը, որ այս ձագը բոլորովին ուիշ տեսակ բան է, բայց էլի պահպանում ու կերակրում է նորան, ինչպէս միւսներին.— հէնց որ տեսնում է ցինը, սկսում է իւր թեւերի տակ ժողովել ինչպէս բոլոր վառիկները, այնպէս էլ սորան։

3. Ո՞ւր կորաւ այդ վառիկը։

Վառիկները մեծացան։ Հաւը նորանց տալաւ լճի ափը, ուր շատ ճիճուներ կային և հողն էլ աւելի փափուկ էր՝ քջուջ անելու համար։ Հէնց որ կարճոտանի վառիկը տեսաւ ջուրը, իսկոյն ընկաւ նորա մէջ։ Հաւն սկսեց կրկչալ, թեւերը թափահարել, դէպի ջուրը վազել. միւս վառիկները նմանապէս շփոթուեցան, վազվզեցին, ծվծվացին. փոքրիկներից մինը երկիւղից թռաւ, կանգնեց մի քարի վերայ և առաջին անգամ երգեց՝ ծու—ղրու—ղու։ Բոլոր ձագերը շփոթուեցան. իսկ կարճոտանի ձագը հանդարտ լողում էր ջրի երեսին, ոչինչ բանից չէր վախենում և ջուրը ճեղքում էր իւր թաղանթապատ թաթիկներով։ Հաւի կրկչոցի վերայ դուրս վազեց պառաւը։ Հէնց որ տեսաւ նա, թէ ինչ է պատահում, իսկոյն բացականչեց. Ա՜խ, ինչպէս սխալուել եմ. մթնումը չեմ կարողացել նկատել, որ հաւի տակ բադի ձու եմ դրնում։ Այս ասելուց յետոյ՝ նա հազիւ կարողացաւ դէպի տուն քշել թուխսը։

ՕՁԸ ԱՌԱՋ ՏԱՔԱՑՆՈՂԻՆ ԿԸԿԾԻ։

Գիւղացին տեսաւ մի օձ, որ ցրտից սառել էր, վեր-

կալաւ, տաքացրեց։ Օձը՝ տաքացաւ թէ չէ, գլուխը հանեց, յարձակուեցաւ գիւղացու վերայ և կամենում էր կծել նորան։ Գիւղացին ասաց. «Ա՛յ օձ, ես քեզ տաքացրի, մեռնելուց ազատեցի, որ ինձ կծե՞ս»։ Օձը պատասխան տուեց. «Աստուած մեզ միայն կծելու շնորհք է տուել. մենք աւելի պէտք է մարդկանց կծենք, եթէ նորանք մեզ ազատած էլ լինին, որովհետև մարդու պէս ապերախտ արարած չ՝կայ աշխարհումս։ Գիւղացին ասաց. «Ա՛յ օձ, արի՛ ինձ մի՛ կծիր, քո ձեռքովդ իմ դատաստանս մի կարիր, թող կանչենք երեք դատաւոր և նորանք մեր դատաստանն անեն»։ Օձը համաձայնեցաւ. կանչեցին մի պառաւ ձի։ Ձին ասաց. «Մարդը ամենից ապերախտն է աշխարհիս երեսին. ես նորան քանի քանի տարի է ծառայում եմ, նորա կեանքը պատերազմների մէջ ազատել եմ, նորան մինչև այսօր շալակած ման եմ ածել և հիմայ, որ ծերացել եմ, էլ երեսիս չի մտիկ տալիս և կամենում է ինձ մորթել տալ, որ կաշիս ծախէ։»

Յետոյ կանչեցին մէկ ծեր գոմէշ։ Գոմէշն ասաց. «Մարդու պէս ապերախտ արարած չեմ տեսել աշխարհումս։— Քանի որ ես փոքր էի և ուժեղ, նա ինձ լծեց իւր սայլում, արօրում, ցաքանում, և ամեն կերպով ծառայեցրեց ինձ. հիմայ՝ երբ մի փոքր ծերացել եմ, կամենում է ինձ մորթել, իմ միսն ուտել և կաշուիցս իւր համար տրեխներ շինել»։

Գիւղացու բանը վատ էր. մի դատաւորն էր մնացել։ Կանչեցին աղուէսին։ Աղուէսը՝ տեսնելով թէ բանն ինչ տեղն է հասել՝ փսփսաց գիւղացու ականջումը. «Եթէ ինձ մի գեր հաւ կը խոստանաս քո հաւաբունից, ես քեզ կ՝ազատեմ»։ Մարդը գլխով արեց։ Աղուէսն այսպէս սկսեց

խոսել. «Օ՛ձ եղբայր, ես ամենից առաջ շատ եմ զարմանում, թէ ինչպէս ես դու տեղաւորվում այս ծակի մէջ. չէ, ես չեմ հաւատում, այս քո բունը չ՚պէտք է լինի. խնդրեմ մի փորձի համար ներս սողա՛ սորա մէջ, տեսնեմ։ Օձը ներս սողաց։ Խորամանկ աղուէսը նորա բնի բերանը մեծ քարով ծածկեց և խեղճ գիւղացուն օձից ազատեց։

Միւս օրը՝ առաւօտեան, աղուէսը գնաց գիւղացուտուն՝ հաւն ստանալու։ Գիւղացին քնած էր։ Նորա ծառաները սաստիկ թակեցին խեղճ աղուէսին և ճանապարհ գցեցին։ Այն ժամանակ աղուէսը՝թափ տալով իւր պոչը՝ ասաց. ճշմարիտ որ մարդը շատ ապերախտ է եղել։»

Թռչնակ

Մանուկներ.

Սիրուն թռչնակ, բռնուեցար,
Ցանցից չես ազատուիլ.
Ոչինչ բանով աշխարհում
Քեզնից չենք բաժանուիլ։

Թռչնակ.

Ա՜խ, ձեր ինչի՞ն եմ պէտք ես,
Սիրելի մանուկներ.
Թողէք ինձ ազատ թռչեմ,
Բացէք ցանցիս դռներ։

Մանուկներ.

Չէ, չէ, թռչնակ, չենք թողնիլ,
Դու մեզ մօտ կը մնաս.
Մենք քեզ շաքրէ հաց կը տանք,
Կ՚ուտես, կ՚ուրախանաս։

Թռչնակ.

Ա՜խ, շաքրէ հաց չեմ սիրում,
Քաղցրեղէն չեմ ուտում.
Թողէք, դաշտի մորեխներն
Շաքրից լաւ եմ հաշւում։

Մանուկներ.

Այնտեղ, դաշտում ձմեռը
Գուցէ ցրտից մեռնիս,
Իսկ մեզ մօտ ոսկուց շինած
Վանդակի մէջ կ՝ապրիս։

Թռչնակ.

Օ՜, մի՛ վախէք՝ ձմեռը
Տաք կողմեր կը թռչեմ,
Իսկ բռնուած՝ դրախտն էլ
Ինձ բանտ կը համարեմ։

Մանուկներ.

Թռչնակ, թռչնակ, մենք ինչպէս
Քեզ կը փայփայէինք,
Չէինք թողնիլ, որ տխրես,
Միշտ կ՝ուրախացնէինք։

Թռչնակ.

Հաւատում եմ. բայց ձեր սէրն
Ինձ միշտ կը վնասէր,
Որովհետև այդ կերպով
Աչքս յաւիտեան կը փակուէր։

Մանուկներ.

Ճշմարիտ է, ո՛վ թռչուն,
Գերութեան չես տանիլ.
Աստուած քեզ հետ, դէ՜հ թռիր,
Ազատ, ուրախ եղիր։

ՀՐԱՒԷՐ.

Եկէք, բարեկամք, եկէք,
Արագ արագ վազեցէք.
Դասի սեղանը դրած է,
Դասագրքերը բերած է.
Ժամանակ է վազեցէք,
Եկէք, բարեկամք, եկէք։

Գիւղացին.

(Մանկական խաղ)

Գիւղացին ո՞նց է անում
Իր արտումը բանելիս,
Արիւն քրտինք թափելիս,
Երբ որ ցորեն է ցանում.
Գիւղացին ո՞նց է անում։
Ա՜հա այսպէս անում է,
Երբ ցորենը ցանում է.
Լա, լա, լա, (4 անգամ)։
Գիւղացին ո՞նց է անում
Իր արտումը բանելիս,
Սիրուն ցորենն հնձելիս,
Աշխատելով անդադրում.
Գիւղացին ո՞նց է անում։
Ա՜հա այսպէս անում է,
Երբ ցորենը հնձում է.
Լա, լա, լա, . . .
Գիւղացին ո՞նց է անում,
Երբ անհամար հասկերը
Ծածկում են իր արտերը.
Երբ իր ցորենն է կրում,

Գիւղացին ոնց է անում.
Ա.Հա՛ այսպէս անում է,
Երբ ցորենը կրում է.
Լա, լա, լա, . . .
Գիւղացին ոնց է անում
Արտիցը յետ դառնալով,
Ամբարը լի ցորենով,
Երբ իր ցորենն է կալսում.
Գիւղացին ոնց է անում։
Ա.Հա՛ այսպէս անում է,
Երբ ցորենը կալսում է.
Լա, լա, լա, . . .

Գիւղացին ոնց է անում,
Երբ խրճիթը յետ գալիս,
Պարզ անկողին մտնելիս,
Բուք քամուց անհոգ լինում.
Գիւղացին ոնց է անում։
Այսպէս քնում է խաղաղ,
Սիրտը հանգիստ և ուրախ։
Լա, լա, լա, . . .
Ապա անհոգ գիւղացին,
Յետ ծանր աշխատանքին,
Նոր ոյժ, նոր սիրտ է առնում,
Զբօսնում է ու երգում։
Լա, լա, լա, . . .

Ֆանելուկների բացատրութիւնները

Երես.
«48» 1. Փետուրէ գրիչ։—2 Հոլ (բզզան, թօփաճ)։
«50» 1. Ձու։ 2. Ձուր—գետ։—3. Գլուխ շաքար։
«51» 1. Մէկ և երկու։—2. Հինգը բաժանած երեքի մէջ։
«54» 1. Հրացան։—2. Թուր, դաշոյն։
«55» 1. Սեղան.—2. Հեշտաեռ (սամօվար)։
«58» 1. Փող։—2. Կրնայ։
«61»—Արեգակ։
«63»—1. Թուզ։—2. Ցորեն։—3. Նուշ։—4. Մանիշակ։
«65»—1. Ոսկի և արծաթ։—2. Ոսկի։
«68»—1. Բերան, ականջներ, աչքեր։ 2.—Քիթ։
«74»—Բերան և ատամներ։—2. Ձեռների և ոտների մատները։
«79» Կարդալ գրել—ուսում։
«81»—Մարդս մանկական, այրական և զառամեալ հասակների մէջ։
«94»—Մոմակալ և պատրոյգ։

ԲԱՑԱՌԱԳԻՍ

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

---

1. Տէր Ղևոնդեան՝ Մայրենի լեզու. ա. տ. . . . . 35 կ.
2. » » » բ. տ. . . . . 40 կ.
3. » » » գ. և դ. տ, ... 70 կ.
4. » Մայրենի լեզուի քերակ. տարերքը մ. ա. . . 30 կ.
5. » » » » մ. բ. . . 50 կ.
6. » Բացատրութիւն Մ. Լեզուի ա. տ. . . . . 60 կ.
7. » Հայոցզի՝ Սրբ, պատմ. Հին Կտակարանի . . 50 կ.
8. » » Սրբ. պատմ. Նոր Կտակարանի . . 50 կ.
9. Աղայեանց՝ Ուսումն Մայրենի լեզուի. ա. տարի . . . 25 կ.
10. » բ և գ. տարի . . . . . 45 կ.
11. » Անահիտ, հին զրոյց . . . . . 50 կ.
12. Տէր-Ստեփանեան՝ Սկզբունք քր. հաւատոյ . . . . . 50 կ.
13. Ս. Մանդինեան՝ Ազգային Ընդ. Աշխարհ . . . . . 25 կ.
14. » Ազգ. Դիւցազ. Աշխարհ . . . . . 30 կ.
15. » Նահապ. և Հայր. Աշխարհ. . . . . 65 կ.
16. » Բացատրութիւն Ընտ. Աշխարհի . . . . . 75 »
17. » Հինգելի Թուաբ. խնդիրներ մ. ա. . . . . 40 »
18. » Կեանքի հանգ. համ. Թուաբան. . . . . 75 »
19. Կոստանեան՝ Ծաղկաքաղ, շրջան Ա. (գրաբար) . . . 25 »
20. » Ծաղկաքաղ, շրջան Բ. (գրաբար) . . . 60 »
21. » Ծաղկաքաղ, շրջան Գ. (գրաբար) . . . 40 »
22. » Գրաբարի հոլովումը . . . . . 15 »
23. » Գրաբարի խոնարհումը . . . . . 25 գ.
24. Նազարեանց՝ Հայոց լեզուի ուսուցիչ. գ. տարի . . 40 կ.
25. Վարձելեան՝ Դասագիրք Թուաբանութեան . . . . 70 կ.
26. Յ. Գ. և Մ. Պ. Ժողովածու Թուաբան. խնդ. մ. ա. . . 35 կ.
27. » » մ. բ. կոտորակները . . . . 45 կ.
28. Այվազեան՝ Նախակրթանք, մ. ա. . . . . 40 կ.
29. Տէր Դաւթեան՝ Руск. слово. . . . . 50 կ.
30. Агніевъ "Первый шагъ„ . . . . . 45 կ.
31. Եղիշէ ըստ Անձևացեաց օրինակի . . . . . 1 ռ. և 80 կ.

Վերոյիշեալ գրքերից գումարով կանխիկ գնողները նշանաւոր զիջումն ունին։

4533
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0062924